№ 87 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 27 ԱՊՐԻԼԻ

1910

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 27 ԱՊՐԻԼԻ № 87

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն ժամով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դօլլար, Եւրօպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նախ. հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով):

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Ко" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Ժողովարան

Այսօր, երեքշաբթի, ապրիլի 27-ին
տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
Երեկոյթին կը նուագեն զինւորական երաժշտական խումբը և սազանդարները:
ՊԱՐԵՐ
Եւրոպական և կովկասեան:
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ վճարում են մուտքի համար 1 ր.:
446. 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ.
շինութեան դահլիճում (Արաս-Արադսկի հր.)
Երեքշաբթի, ապրիլի 27-ին
կայանալու է
օպերային երգիչ (տենոր)
ԶԱՐԵՀ ՏԻՐԱՅԵԱՆԻ
ՀԱՄԵՐԳԸ
Մասնակցութեամբ օր. Տէրեանի (դաշնակահարուհի), տ. տ. Շրեդեր-Իվանովայի, Վ. Ա. Գուլուլօվայի, պ. պ. Սեւումեանի, Վ. Ի. Պարժիցկիի (ջութակահար, свободный художникъ), Ռ. Մելիքեանի, Վարդանեանի (բարիտօն) և ուրիշ.:
Սկիզբն է երեկ. ճիշդ $8^{1}/_{2}$ ժամին:
Տեղերի գները 2 ր. 10 կ.-ից մինչև 50 կ., աշակերտական՝ 30 կ.: Տոմսակները կարելի է ստանալ Սուգանաճեանի նոտավաճառանոցում (Երևանեան հր.), իսկ համերգի օրը առաւօտից Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում:
Մանրամասնութիւնները կը տպվեն յայտարարութիւններում:
(Կ. Ե.) (առ.) 460. 2—2

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1.
(երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(Ե. Հ. Կ.) (առ.) 1045. 100—87

ՍԹԱՓՄԱՆ ՆԱԽԵՐԳԱՆՔՆԵՐԸ

Սրտամաշ և տանջալի էին այն բանակռիւը և մաքառումը, որ մենք մղում էինք որոշ բանակների և գործողութիւնների դէմ ազատագրական շարժման օրերում, որովհետև նկատում էինք, որ ճակատագրական սխալներ են գործվում մի այնպիսի պատասխանատու շրջանում, երբ ամեն մի խոշոր զանցառութիւն պէտք է առաջացնէր տխուր հետևանքներ և անդառնալի կորուստներ:

Այժմ, երբ անցել են ամիսներ և տարիներ, երբ շատ բան պարզվել է անողոք իրականութեան տրամաբանական արտայայտութիւնների մէջ, սկսել են սթափվել և այն մարդիկ, որոնք լինելով ենթակայ համակերպչական հիպնոսին, շշմած դրութեան մէջ՝ չէին կարողանում ոչ քննադատութեան և իմաստութեան խօսքը գնահատել և ոչ պատմական բոպէի լրջամիտ թելադրանքները գիտակցել:

Մեզ համար պարզ էր, որ ամեն մի խոշոր տակտիկական անպատեհութիւն, ամեն մի անտեղի զրկանք և նորահնար բռնութիւն պէտք է հանդէս բերէին բողոք և հակաշարժում իրականութեան մէջ:

Այնտեղ, ուր մարդիկ նախ և առաջ շահագրգռված էին քաղաքացիական երաշխաւորութիւնների ապահովութեան խնդրով, հանդէս բերվեցին միմեանց բաժանող, միմեանց դէմ թշնամացող հոսանքներ:

Եւ հասկանալի է, որ միմեանց ետևից առաջ եկան դժգոհների լեգէոններ, որոնք օրէ-ցօր աւելի ու աւելի ստուարացան իրանց թւով: Այդ դըժգոհների մէջ բացի մոտավախներից և ներհայեաց պահպանողականներից, կային նաև բարեխիղճ, ազատախոհ, հասարակ քաղաքացիներ, որոնց տեսութեան առաջ նսեմացան և վարկաբեկվեցին ազատագրութեան բարիքները, որովհետև դրանցից, այդ բարիքներից, աւելի խոշոր էին զրկանքները և կորուստները, որոնք առաջացել էին իրականութեան մէջ սխալ գործելակերպից:

Մխիթարական է արձանագրել, որ այն բանակներից մէկը, որ այն ժամանակ մերժում էր քննադատական ամեն մի նկատողութիւն, այժմ արձանագրում է եղած սխալը, թէև վերագրելով նրան ուրիշ համախմբութիւններին: Ահա այդ բանակի օրգանի խօսքերը.

«Թէ մտաւոր և թէ գործնական մարզանքների աշխարհում սօցիալական հարց և քաղաքական ազատութեան հարցը ոչ միայն ձուլվեցին յեղափոխական տակտիկի մէջ, այլ և առաջինը հետզհետէ աւելի և աւելի շեշտվեց, զօրացաւ ի վնաս վերջինի:

«Դասակարգային նշանաբանների ժխորի մէջ հալվել էր կամ հալվելու վրա էր քաղաքական իրաւունքների նուաճման հարցը:

«Սօցիալիզմը մեղաւոր չէր այդտեղ: Մեղաւոր էին ռուսական ինքնատիպ, նեղված, ձևափոխված սօցիալիզմը, դասակարգային պայքարի նեղ, անհամբերող, միակողմանի հասկացողութիւնները և արհամարհոտ վերաբերումը դէպի այն ամենը, ինչ որ դուրս է «դասակարգային» շրջանակներից»:

Ուրեմն սխալ է համարվում դասակարգային կուի այն արտայայտութիւնը, որը իբրև բանաձև դրված էր մաքառման և կուի դրօշակի վրա:

Սխալ է համարվում դասակարգային կուի առաջ մղելը այն եղանակով, որ նա կլանէր և խեղդէր իր մէջ գաղափարական և քաղաքացիական խնդիրներ:

Սխալ է համարվում այն բանաձևը, որ ջլատում, բաժանում և անջատում կարող է առաջացնել հասարակութեան մէջ:

Այդ այդպէս է: Մենք այդ բոլորը հասկանում ենք, այլ և կասենք՝ աւելի: Հէնց այդ տեսակէտն էինք մենք պաշտպանում ճակատագրական օրերում և մերժում էինք դասակարգային կռիւը:

Եւ երբ օրը ցերեկով պարզում էինք այդ բոլորը և դնում ասպարէզի վրա, մենք ոչ միայն պախարակութիւնների էինք հանդիպում, այլ և ամեն տեսակ վիրաւորանքների:

Դժբաղդաբար այժմ ուշ է անցեալի վերաբերութեամբ:

Շատ բան փչացվել, խեղաթիւրվել, այլասերվել է:

Իսկ պատմութիւնը յետ չէ դառնում:

Սրտի կսկիծով մենք նախատեսում էինք՝ թէ բարձրագոչ ֆրազներով կատարվող պատմական սխալները հանդիսանում են իբրև հասարակական ոճիրներ, որոնք սոսկալի հետևանքների դուռ էին բացում: Եւ մենք բողոքում ու պայքարում էինք, որքան կարող էինք և որքան այդ հնարաւոր էր, ենթարկվելով ամեն տեսակ բանսարկու զրպարտութիւնների և զրկանքների:

Մի շարք յօդուածներով մենք բացատրում էինք, որ դասակարգային գիտակցութիւնը չը պէտք է խառնել դասակարգային ընդհարումների հետ: Կարևոր համարելով այդպիսի գիտակցութեան խորացումը և ընդարձակումը՝ մենք կորստաբեր էինք համարում դասակարգային փոխադարձ ոչնչացումը, անխնայ հալածանքներն ու ահաբեկիչ արարքները:

Ներկայի սթափումը ուշ է. իրականութիւնը փոխվել չէ կարող:

Բայց հասարակական հոսանքների բնորոշման և գիտակցական վերաբերմունքի ընդարձակման տեսակէտով, անկասկած, մխիթարական է և այն, երբ ճշմարտութիւնը պարզված է նաև նախկին հիպնոսացածների համար: Դրանով արդար մաքառման դերը ճանաչված է աւելի ևս ընդարձակօրէն:

Այդ տեսակէտով՝ որքան էլ ուշ լինի գիտակցութեան նուաճումը, այնուամենայնիւ աւելի լաւ է ուշ, քան երբէք:

Ա. Քալանթար

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Լօնդօն, 24 ապրիլի

Թագաւորի մեռնելու ժամանակ զաւակներից բացակայում էր միայն Նօրվէգիայի Թագուհին, որ ուղևորվել է արդէն Անգլիա: Թագուհու գալուստը սպասվում է վաղը: Լուրերին նայած, Թագաւորն ամբողջ երեկոյ գտնվում էր թմրած վիճակի մէջ. միայն ժ. 9-ի և 10-ի մէջերը նա մի փոքր ժամանակ զգաստացաւ. յետոյ Թագաւորը վերջնականապէս գիտակցութիւնը կորցրեց:

Լրագիրները թւում են հանգուցեալ Թագաւորի մատուցած ծառայութիւնները, խօսում են մանաւորապէս նրա առ Ռուսաստանը ունեցած վերաբերմունքի մասին. «Դէյլի Մէյլը» ասում է. «Երբ Թագաւորը գահ բարձրացաւ, Մեծ Բրիտանիան դէմ առ դէմ կանգնած էր թշնամի Ֆրանսիայի և Ռուսաստանի առաջ. այժմ Ֆրանսիան և Ռուսաստանը նրա յուսալի բարեկամներն են. կատարվեց ապշեցուցիչ փոփոխութիւն, որի իրագործումը դեռ 10 տարի առաջ համարվում էր մի տեսակ գերբնական բան»: Միևնոյն մտքով են խօսում «Թայմսը», «Մօրնինգ Պօստը», «Դէյլի Տէլէգրաֆը» և այլն:

Երկրում տիրում է ընդհանուր վիշտ ու թախիծ: Ամենուրեք դրօշակները իջեցրված են, լսվում է զանգահարութիւն: Բոլոր ներկայացումները յետաձգված են: Աշխարհի ամեն մասերից ստացվում են ցաւակցական հեռագրներ: Բօրսան փակված է:

Կայացաւ պարլամենտի ձևական նիստը, որ յետաձգվեց Չէրչէլլի առաջարկութեամբ: Լօրդերի պալատում լօրդ կանցլերը և միւս պէրերը երդում տուեցին: Գաղտնի խորհրդի անդամները պաշտօնական զգեստով ժամը $3^{1}/_{2}$-ին եկան Սենտ-Ջէմսի պալատը: Թագաւորը ծովակալի զգեստով առանց պահակախմբի եկաւ պալատ ժամը 4-ին: Բազմահազար ամբոխ յարգանքով ողջունում էր նրան: Համաձայն արարողութեան, Թագաւորը ստորագրեց Թագաւոր հռչակվելու ակտը, յետոյ զգացված ձայնով ճառ արտասանեց, յայտնելով որ ուժեղ յուզմունքը թոյլ չէ տալիս իրան խօսել: Թագաւորը յիշեց իր հօր խօսքերը, որ նա արտասանեց գահ բարձրանալիս, թէ մինչև կեանքի վերջը նա աշխատելու է իր ժողովրդի օգտին. հետևելով հօր օրինակին, Թագաւորը Աստուծոյ ողորմութեամբ ամենալուրջ կերպով կը ձգտէ, որպէսզի աշխատէ ժողովրդի բարեկեցութեան համար: Մատնանշելով, որ յանձին ննջեցեալի նա կորցրեց հօրը և բարեկամին, Թագաւորը յիշեցրեց այն խոր համակրանքի մասին, որ արտայայտեցին Թագաւորական գերդաստանին: Թագաւորը վերջում յայտնեց, որ նրա ամենալուրջ մտածողութիւնը միշտ էլ սահմանադրութիւնը պահպանելը կը լինի:

Թագաւորը անձամբ հաղորդեց բոլոր միապետներին Էդուարդ Թագաւորի մահվան մասին: Բօրսաները փակ են: Դատաստանական պալատները նիստերը յետաձգեցին: Չը նայած կարկուտին և կայծակին՝ քաղաքի զանազան տեղերում խռնվում է բազմաթիւ ժողովուրդ, որպէս զի ներկայ լինի Նոր Թագաւորի՝ Գէորգ V-ի՝ Թագաւոր հռչակվելու հանդիսին: (Հ. Գ.)

Լօնդօն, 25 ապրիլի

Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Թագաւորի կեանքի վերջին րօպէներին Քենտըրբըրիի արքեպիսկոպոսը Թագաւորի անկողնու մօտ կատարել է կարճ աղօթք:

Թագաւորի մահվան առիթով պալատում հաստատվեց սուգ մի տարով:

Ռուսական դեսպանատան եկեղեցում տեղի ունեցաւ հոգեհանգիստ Էդուարդ Թագաւորի յիշատակին՝ դեսպանատան բոլոր պաշտօնեաների ներկայութեամբ: (Հ. Գ.)

Պետերբուրգ, 25 ապրիլի

Նոյին Կայսերական Մեծութիւններ Կայսրը և Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան, ստանալով Էդուարդ Թագաւորի մահվան լուրը, խորին ցաւակցութիւնը յայտնեցին այրի Ալէքսանդրա Թագուհուն և Գէորգ հինգերորդ Թագաւորին: Բացի դրանից Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան առանձին հեռագիր ուղարկեց Վիկտօրիա Թագուհուն:

Այսօր ցաւակցութիւն արտայայտելու մեծ-բրիտանական դեսպանութիւնը այցելեցին Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրօվիչ, մի քանի մինիստրներ, Թագաւորի սվիտայի անձինք, պալատական տիկիններ և բարձր հասարակութեան ներկայացուցիչներ: (Հ. Գ.)

Պետերբուրգ, 25 ապրիլի

Բարձրագոյն հրամանով արտաքին գործերի մինիստրը հեռագրով յանձնարարեց Լօնդօնի ռուսական դեսպանին յայտնել մեծ-բրիտանական կառավարութեանը Կայսերական կառավարութեան անկեղծ ցաւակցութեան զգացմունքները. «Ծանր վիշտը այցելեց արքայական ընտանիքին և անգլիական ազգին,—ասված է մինիստրի հեռագրի մէջ,—և խորին համակրութիւն է յարուցանում Ռուսաստանում, ուր հանգուցեալ Թագաւորին բոլորին էլ համարում էին անկեղծ բարեկամ»:

«Россія» լրագիրը առաջնորդող յօդուածում շեշտում է, որ «անգլիական միապետի մահով քաղաքական բեմից իջնում է եւրոպական թագակիրների մէջ նշանաւորագոյններից մէկը, որը դէպի ինքն էր գրաւել համայն քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը իր արդիւնաւէտ գործունէութեամբ, որը ուղղված էր ոչ միայն այն երկրի զօրութիւնը մեծացնելուն, որ նա թագաւորում էր, այլ և եւրոպական խաղաղութեան ամրապնդման: Թագաւորի մեծագոյն ծառայութիւնը արտաքին քաղաքականութեան շրջանում նրա կատարած յեղաշրջումն է անգլիական արտաքին քաղաքականութեան սիստեմի մէջ, որը մինչև նրա թագաւորումը թշնամական էր դէպի Ռուսաստանը և Ֆրանսիան: Ֆրանսիայի հետ մերձեցումը և Ռուսաստանի հետ համաձայնութիւնը Էդուարդ արքայի Թագաւորութեան երկու աչքի ընկնող դէպքերն են, որոնց շնորհիւ խաղաղութիւնը և քաղաքական հաւասարակշռութիւնը երկար ժամանակով ամրապնդված են Եւրոպայում: Մեր բարեկամ անգլիական ժողովրդի հետ միասին ողբալով Ռուսաստանի աչքի ընկնող բարեկամ Էդուարդ Թագաւորի մահը, մենք կարող ենք միայն ցանկալ, որ նրա յիշատակը յաւիտեան ապրէր նրա շնորհակալ ժամանակակիցների և սերունդների սրտերում»: (Հ. Գ.)

Պետերբուրգ, 25 ապրիլի

Բարձրագոյնս հրամայվեց Բարձրագոյն Պալատին կից սահմանել երեք ամսով սուգ Էդուարդ Թագաւորի մահվան առիթով:

Ստատս-սեկրէտար Ստօլիպինը հեռագիր ուղարկեց Ասկվիտին, որով խոր վիշտ յայտնելով Էդուարդ Թագաւորի մահվան առիթով, անկեղծ ցաւակցութիւն է յայտնում այն ծանր կորստի համար, որ կրեց Թագաւորական ընտանիքը և անգլիական ժողովուրդը: (Հ. Գ.)

Պարիզ, 24 ապրիլի

Լրագիրների առաջին երեսները նուիրված են Էդուարդ Թագաւորի կեանքի վերջին րօպէներին և կենսագրութեանը Թագաւորի, որին ֆրանսիական կարծիքը միաձայն ողբում է իբրև խաղաղասէրի և Ֆրանսիայի հաւատարիմ բարեկամի:

Պիշօնը հեռագրեց Գրէյին, որ նա արտաքին գործերի մինիստրութեան առանձին վշտակցութիւնը կապում է համօրէն Ֆրանսիայի վշտի հետ: Նախագահ Ֆալիէրը ցաւակցութիւն յայտնեց այրիացած Թագուհուն և Ուէլսի պրինցին՝ միապետի մահվան առիթով, որ Ֆրանսիայի բարեկամ էր: Ելիսէյեան պալատում, մինիստրութիւններում և հասարակական շինութիւններում դրօշակները իջեցված են: (Հ. Գ.)

Բեռլին, 24 ապրիլի

Էդուարդ Թագաւորի մահվան պատճառով Վիլհէլմ կայսրը վերադարձաւ Վիսբադէնից: Կայսրի հրամանով նաւատորմի օֆիցէրները սուգ են պահելու ութ օր:

Հէնց որ ստացվեց Էդուարդի մահվան տեղեկութիւնը, երեկոյեան լրագիրները յօդուածներ նուիրեցին հանգուցեալին, որոնցով ցաւ են յայտնում բրիտանական ժողովրդին, ընդգծում են Թագաւորի անսովոր կարգի պետական յատկութիւնները, առանձնապէս արտաքին քաղաքականութեան նկատմամբ, որի շնորհիւ անգլիական աշխարհային պետութիւնը ուժեղացաւ: Լրագիրները յիշատակում են, որ Գերմանիայի և Անգլիայի միջև ծագած տարաձայնութիւնների դէպքերում արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ Թագաւորը Գերմանիայի թշնամին չէր: (Հ. Գ.)

Բեռլին, 25 ապրիլի

Էդուարդ Թագաւորի մահվան առիթով պալատում հաստատվեց չորս շաբաթով սուգ: Կայսրը այցելեց անգլիական դեսպանին ցաւակցութիւն յայտնելու համար, որի մօտ մնաց մի ժամ: (Հ. Գ.)

Հռօմ, 24 ապրիլի

Պատգամաւորների պալատ: Արտաքին գործերի մինիստրը ընդգծեց Էդուարդ Թագաւորի աչքի ընկնող յատկութիւնները և յայտնեց, որ Անգլիայի վիշտը հանդիսանում է միևնոյն ժամանակ Իտալիայի վիշտ, մանաւանդ նրա միապետի համար: Պալատը նիստը փակեց մինչև չորեքշաբթի. նոյնպէս սենատը: Պարլամենտական շէնքերի վրա ծածանվում են սգի դրօշակներ:

Պալատում սուգ հաստատվեց երկու շաբաթով: Լրագիրները տպել են հանգուցեալի պատկերը և խորին ցաւակցութիւն են յայտնում նրա մահվան առիթով, յիշելով հանգուցեալի բարոյական և քաղաքական ընդունակութիւնները, և ասում են, որ ամբողջ Իտալիան բաժանում է Անգլիայի վիշտը: (Հ. Գ.)

Հռօմ, 25 ապրիլի

Դուքս Աօստակին իբրև իտալական Թագաւորի ներկայացուցիչ ներկայ կը լինի Լօնդօնում Էդուարդ Թագաւորի թաղմանը: (Հ. Գ.)

Սօֆիա, 25 ապրիլի

Էդուարդ Թագաւորի մահվան տեղեկութիւնը ճնշող տպաւորութիւն թողեց բոլոր շրջանների վրա: Ֆերդինանդ Թագաւորը մեծ-բրիտանական դեսպանին ցաւակցական հեռագիր ուղարկեց: Արտաքին գործերի մինիստրը կառավարութեան կողմից անգլիական դեսպանին յայտնեց ցաւակցութիւն: (Հ. Գ.)

Խրիստիանիա, 25 ապրիլի

Թագաւորական զոյգը մեկնեց Լօնդօն: Թատրօնները փակ են: (Հ. Գ.)

Կ. Պօլիս, 25 ապրիլի

Պալատի և սենատի նախագահները, լսելով Էդուարդ Թագաւորի՝ Թիւրքիայի և ընդհանուր խաղաղութեան բարեկամի մահվան բօթը, որոշեցին փակել նիստերը ի նշան սգի: (Հ. Գ.)

Թաւրիզ, 25 ապրիլ

Անգլիական Թագաւորի մահվան առիթով ռուսաց ընդհանուր հիւպատոսութեան պաշտօնեաներն և ռուսական զօրաբաժնի հրամանատարը շտաբի հրամանատարի հետ միասին այցելեցին անգլիական ընդհանուր հիւպատոսին ցաւակցութիւն արտայայտելու համար։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վիէննա, 24 ապրիլ

Բացվեց որսորդական առաջին համաշխարհային ցուցահանդէսը։ Ֆրանց-Յովսէփը պաշտօնապէս ինքն էր բանալու ցուցահանդէսը, բայց այդ չեղաւ Էդուարդ Թագաւորի մահվան պատճառով։

Չեխ արմատականները հեռացան սլաւոնական պարլամենտական միութիւնից։

«Կոր. Բիւրօյին» հեռագրում են Չերնովիցից. «Բուկովինի գէմստվային կառավարութիւնը փակեց ռուսական ուղղափառական տունը, ռուս կանանց ընկերութեան երեխաների ապաստարանը և Կարպատի ուսանողական ընկերակցութիւնը։ Փակումը պատճառաբանվում է ռուսասիրական պրօպագանդայով»։ (Հ. Գ.)

Փարիզ, 25 ապրիլ

Փարիզում և գաւառում վերաքուէարկութեան ենթարկվեցին պալատի համար ընտրվածները առանց միջադէպերի։ (Հ. Գ.)

Լոնդօն, 24 ապրիլ

Րէյտէրի գործակալութեանը հեռագրում են Պէկինից. «Ստացված, բայց դեռ չը հաստատված լուրերի համաձայն, Լիասում անսպասելի կերպով ապստամբութիւն է բռնկվել։ 1000 չին զինուորներ խողխողված են»։

Բիրմինգամի առևտրական պալատի նախագահը գրաւոր կերպով դիմեց սըր Էդուարդ Գրէյին, տեղեկացնելով որ վաճառականների ընկերութիւնը մեծ յուզմունքով կը վերաբերվի որևէ փոփոխութեան Ֆինլանդիայի անտեսական դրութեան մէջ. այդ փոփոխութեան անխուսափելի հետևանք կարող է լինել Ֆինլանդիայի հետ ունեցած առևտրական յարաբերութիւնների թուլանալը։ Պալատի նախագահը խնդրում է Գրէյին՝ միջոցներ ձեռք առնել բրիտանական շահերը պաշտպանելու համար։ (Հ. Գ.)

Ստօկհօլմ, 24 ապրիլ

Եկաւ Ռուզվէլտը ընտանիքով։ (Հ. Գ.)

Վիէննա, 25 ապրիլ

Եկաւ Հիլմի փաշան։ (Հ. Գ.)

Սանխօզէ (հանրապետութիւն Կաստորիկօյի), 25 ապրիլ

Կարտագօյում զոհվել են 1000 և վիրաւորվել են մօտ 1000 մարդ։ Քաղաքում մնացել են միայն երկու գիւղական տներ։ (Հ. Գ.)

Բեռլին, 25 ապրիլ

«Ֆօսիշէ-Ցայտունգին» հեռագրում են Աթէնքից. «Յունաց կառավարութիւնը հաղորդեց հովանաւորող պետութիւնների դեսպաններին, որ Յունաստանը չէ միջամտում կրէտական հարցի մէջ, որ ամբողջովին կախված է հովանաւորող պետութիւններից։ Դեսպանները հաղորդագրութիւնը ընդունեցին ի տեղեկութիւն և տուին հանգըստացուցիչ վստահացումներ»։ (Հ. Գ.)

Բեռլին, 25 ապրիլ

«Բ. Լօկալ Անց.»-ին հաղորդում են Կանէայից. «Յունաց Թագաւորի անուանակոչութեան օրը տեղի ունեցան մասսայական ցոյցեր Կրէտէն Յունաստանին միացնելու օգտին»։ (Հ. Գ.)

Տօկիօ, 24 ապրիլ

Պաշտօնապէս հերքվում է լրագրական այն լուրը՝ թէ ստորագրվել է ռուս-ճապօնական քաղաքական համաձայնութիւն։ (Հ. Գ.)

Զագրէբ, 25 ապրիլ

Խորվատի սէյմը ցնծութեամբ ընդունեց նախագահի յայտարարութիւնը, որ կառավարութիւնը ներկայացրել է մի օրինագիծ ընտրողական բարենորոգման մասին, որով ընտրութեանը մասնակցող խորվատների թիւը որոշվում է 276,000, փոխարէն 42,000-ի։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 25 ապրիլ

Րէգցօվի նախագահութեամբ տեղի ունեցաւ կոմս Տօլստօյի անուան գրական թանգարանի ընկերութեան ընդհանուր ժողովի նիստը, ուր հրաւիրված էին գրողների համագումարի անդամները։ Ընդունվեց ընկերութեան խորհրդի առաջարկութիւնը՝ հրատարակել Լեվ Տօլստօյի անունով մի ժողովածու և այնուհետև հաստատել մշտական տուն և թանգարան Տօլստօյի անուան, որի համար յատկացված է 4000 րուբլի։

Տեղի ունեցաւ Թոքախտի դէմ մաքառող համառուսական լիգայի անդամների առաջին ընդհանուր ժողովը։ Նախագահ ընտրվեց պրոֆ. Վենիամինովը։

Կանանց առևտրի դէմ մաքառող համագումարը գտնելով, որ անառակութեան և վեներական հիւանդութիւնների դէմ կռւելու գործում երիտասարդութեան բարոյական կրթութիւնը խոշոր դեր է խաղում, իր պարտականութիւնն է համարում մինիստրութեան ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրա, թէ կրթ. հաս. մեծահասակ սաների խելացի ծանօթութիւնները սեռական կեանքի և վեներական հիւանդութիւնների էութեան հետ հանդիսանում է անպայման անհրաժեշտ։ Համագումարը վճռական որոշում արեց, որ անառակների որդոց դաստիարակութեան մասին պէտք է հոգան հասարակական ինքնավարութիւնները։ Համագումարը փակվեց. հետևեալը որոշվեց կայացնել Մոսկվայում 1912 թւին։

Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնան Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի հետ մեկնեցին Անգլիա։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 25 ապրիլ

Կօլօմեաժեան իպօդրոմում հասարակութեան մեծ բազմութեան ներկայութեամբ բացվեց օդագնացային շաբաթ։ Սկսվեց թռիչքների միջազգային մրցումն կայսերական համառուսական աէրօկլուբի հովանաւորութեան ներքոյ։ Մրցակցութեանը մասնակցում են ավիատօրներ Պօպօվ (Ռուսաստան, Րայտի բիպլանով), Խրիստիանս (Բէլգիա) և Էդմօնդ (Շվէյցարիա, Ֆարման բիպլաններով), բարոնուհի Բէլ Լարօշ (Ֆրանսիա, Վուազէն ապպարատով), Վինցիրս (Գերմանիա, Անտուանէտ մօնօպլանով) և Մօրան (Ֆրանսիա, Բլէրիօ մօնօպլանով)։ Թռիչքից առաջ մաղթանք կատարվեց։ Թռիչքներն սկսվեցին 2 ժամին մրցութիւններով Պետերբուրգի մեծ պրիզի համար։ Առաջին յաղթողին տրվում է 5500 ր., իսկ երկրորդին 3800 րուբլի։ Ուրիշներից երկար մնաց օդի մէջ Խրիստիանսը՝ առաջին անգամ 11 րօպէ 47 վայրկեան, երկրորդ անգամ 10 ր. 43 վայրկեան, Էդմօնդը՝ առաջին անգամ $5^{1}/_{2}$ րօպէ, սակայն երկրորդ թռիչքի ժամանակ դուրս թռաւ շրջանից և աջողութեամբ իջաւ կողքին։ Մօրանը առաջին անգամ մնաց 7 րօպէ 3 վայրկեան, երկրորդ անգամ 10 ր. 7 վայրկեան, սակայն հասաւ 38 սաժէնի ամենամեծ բարձրութիւնը։ Թռիչքների շարունակութիւնը այդ պրիզի համար մինչև ժամի 2-ն է։ Սաստկացող քամու պատճառով թռիչքները դադարեցված են մինչև 5 ժամը։ Ապա սկսվեցին մրցութիւններ ամենօրեայ պրիզների համար։ Երկու պրիզներն էլ ստացաւ Խրիստիանսը, որը օդի մէջ մնաց $22^{1}/_{2}$ րօպէ։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 24 ապրիլ

Գրողների համագումարի նիստում Գրադօվսկին խորհուրդ տուեց միանալ գրողների և գրավաճառների առաջին համագումարի այն բանաձևերին, որոնցով պաշտպանվում են գրողների պրօֆէսիոնալ շահերը։ Կոլւբօվսկին հարց բարձրացրեց գրողների փոխադարձ նիւթական օգնութեան մասին և առաջարկեց լայնացնել գրականագէտների փոխադարձ օգնութեան գանձարկղի գործունէութիւնը և կանօնադրութիւնը։

Հօֆմարշալ կոմս Բենկէնդորֆը այցելեց անգլիական դեսպանին և Կայսրի անունից ցաւակցութիւն յայտնեց Էդուարդ Թագաւորի մահվան առիթով։ (Հ. Գ.)

Հէլսինգֆօրս, 24 ապրիլ

Սէյմը միաձայն ընդունեց Հիմնական Օրէնքների մասնաժողովի եզրակացութիւնը, թէ անհրաժեշտ է պաշտպանել Բարձրագոյն առաջարկութեանը այն մտքով, որ համապետական նշանակութեան օրէնքների հրատարակութեան կարգի օրինագիծը մեծամեծ փոփոխութիւններ է ենթարկում Ֆինլանդիայի հիմնական օրէնքները։ Սէյմը անկարող է հրաժարվել իրան պատկանող այդօրինակ հարցերի լուծումից. այդ պատճառով հնարաւոր չէ գտնում եզրակացութիւն անել այդ օրինագծի վերաբերութեամբ։ Սէյմի նիստը, որ սկսվել էր առ. ժ. 11-ին, տևեց՝ մի և կէս ժամ ընդմիջումով մինչև երեկ. ժ. 9-ը։ (Հ. Գ.)

Հէլսինգֆօրս, 25 ապրիլ

Սէյմի երէկվայ նիստում Հիմնական Օրէնքների մասնաժողովի նախագահ Մեխելինը հաւատ յայտնեց, թէ սէյմը անպայման կընդունէ մասնաժողովի եզրակացութիւնը այն մասին, որ սէյմը անկարող է որևէ եզրակացութիւն անել Բարձրագոյն առաջարկութեան վերաբերութեամբ. յետոյ անցաւ օրինագծի քննութեան, յենվելով աշխարհային գերագոյն կարգի վրա, որը, նրա կարծիքով, հրամայում է ֆինն ժողովրդին հաստատ կանգնել իր իրաւունքների վրա։ Նա ճառը վերջացրեց՝ հաւատալով, որ Ֆինլանդիայում չը կայ ոչ մի քաղաքական այնպիսի կուսակցութիւն, որը եռանդով չը ցանկանայ Ֆինլանդիան պաշտպանել վերջապէս անտեղի յարձակումներից։ Իոնաս Կաստրէնը յայտնեց, որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ընդունում է Ֆինլանդիայի պետականութիւնը։ Հիմնական Օրէնքների մասնաժողովի զեկուցումը պէտք է հաղորդէ միևնոյն բանը և Ռուսաստանին։ Յետոյ նա ասաց. «Ռուսական Դուման, ծառայելով իբրև ֆինլանդական ազատութիւնը խեղդելու մի զէնք, հէնց դրանով իրան ստորագրում է մահվան դատավճիռ, որովհետև կառավարութիւնը, առհասարակ ճնշելով ամեն մի ժողովրդական ներկայացուցչութիւն, չի յապաղի արձակել և Դուման։ Ֆինն ժողովուրդը, ի հարկէ, երբէք չի հնազանդվի այն օրէնքներին, որոնք հրատարակված են առաջարկված կարգով, և թէև ընդդիմադրութեան ճանապարհը տատասկոտ է, այնուամենայնիւ այդ ճանապարհը միակն է, որ տանում է յաղթութեան, ինչպէս այդ ապացուցել է Ունգարիայի քառամեայ կռիւը»։ Կոչ ուղղելով դիմադրութեան, Կաստրէնը յենվեց կուլտուրական աշխարհի համակրանքի վրա, որ հաստատում է Ֆինլանդիայի մօռալ ոյժը։ (Հ. Գ.)

Հէլսինգֆօրս, 25 ապրիլ

Երիտասարդ ֆինն Արօկլիօն յօյս յայտնեց, որ ֆինն ժողովուրդը դէմ կը կենայ կռւին՝ պահպանելու համար ուրիշ ազգերի շարքում իր տեղը։

Սօցիալիստ Տակօյը համեմատական գծի վրա դրեց սէյմի եզրակացութեան պահանջը իբրև քաղաքական ինքնապաշտպանութեան մի առաջարկի հետ և յայտնեց, որ պրօլետարիատը ընդմիշտ կռւել է ռուսացման գաղափարի դէմ։

Հին ֆինն Ինգմանը կշտամբեց նախագիծը կազմողներին դօկտրինեօրութեան մէջ և բացասեց ռուսաց պետական Հիմնական Օրէնքների ոյժը։

Շվէդացի պրօֆեսոր Խօմէնը համոզում էր կանգ չառնել կռւի անհրաժեշտութեան առաջ՝ թէկուզ սերնդից-սերունդ։

Երիտասարդ ֆինն և պրօֆեսոր Ստէլիան կէտ առ կէտ բացասում էր քննութեան առաջարկված հարցերի համապետական նշանակութիւնը։ (Հ. Գ.)

Հէլսինգֆօրս, 25 ապրիլ

Երկրի առևտրական ընկերութիւնների կենտրոնական բիւրօն բողոք յայտնեց լօգմանեան առանձին վերաբերմամբ ձեռք առած միջոցների դէմ և այն համոզմունքը յայտնեց, որ վերակազմակերպութեան նախագիծը չի իրագործվի մինչև սէյմի վճռաբանութիւնների ստացումը։ Երիտասարդ ֆինն Պրեհէոնէն, սէյմի ներկայ պատասխանը նմանեցնելով ռուսաց կառավարութեան երեսին գցած ձեռնոցին, պաշտպանում էր յանձնաժողովի կարծիքը։ Հին ֆինն Վիրկունէն ժամնացու հարուած է անում Ֆինլանդիայի ազգային և կուլտուրական կեանքին, մատնացոյց անում մի շարք շվէդական Թագաւորների վրա, որոնք հոգ էին տանում Ֆինլանդիայի բարօրութեան մասին և հանդիսաւոր կերպով խոստացան պաշտպանել տեղական արտօնութիւնները, որոնց պաշտպանողներն էին և Ռուսաց կայսրներ Ալէքսանդր Առաջին և Երկրորդը։ Հին ֆինն Կայրամօ, թոյլ տալով բարեկամութեան հնարաւորութիւնը ռուս ժողովրդի հետ, մատնացոյց արեց, որ հարկաւոր չէ այդ հանրապետական օրէնսդրութիւնը։ Հին ֆինն պաստօր Մալմիվարա կասկած յայտնեց, որ ֆինլանդացիները երբ և իցէ հասնեն միաբանութեան Միապետի և ռուս ժողովրդի միջև և շեշտեց, որ սպառնալիքը ռուսաց կողմից վերջապէս միացրեց և միաձայն վճռի բերեց ամբողջ ֆինն ժողովուրդը, որը կարող է յոյս ունենալ, որ գործը քննելու ժամանակ Դումայում՝ ի փառս Ամենակարող Աստուծու՝ Ֆինլանդիային պաշտպան կը հանդիսանայ Միլիւկօվը։ Հին ֆինն Լագերլէվը մատնանշեց Ֆինլանդիայի լօյալութեան վրա՝ անցեալ դարի ընթացքում Ռուսաստանի նկատմամբ, և ասաց, որ Ֆինլանդիայի ապստամբութիւնը 1812 թ. (?) կը փոխէր Եւրօպայի քարտէզը, և յոյս յայտնեց, որ Միապետը կը վճռէ գործը յօգուտ Ֆինլանդիայի։ Շվէդացի Նիւբերգ ապացուցեց, որ ռուսական բացատրիչ գրութիւնը կազմողները Ֆինլանդիայի օրէնքների վերաբերութեամբ անտեղեակ անձեր են եղել։ Հին ֆինն Դանիէլսօն-Կալմարին ապացուցեց Ֆինլանդիայի սահմանադրութեան գոյութիւնը և մատնանշեց, որ ռուսական օրինագիծը կորստաբեր կը լինի Ֆինլանդիայի համար։ Սէյմը մի պատասխան կարող է միայն տալ—non possumus...

Ժամը 9-ին սկսվեց քուէարկութիւնը. 137 ձայնով ընդունվեց մասնաժողովի զեկուցումը, իսկ 40 ձայնով սօցիալիստ Վուօլիօկի առանձին կարծիքը։ Սէյմը որոշեց ստուգել ներկայ նիստի արձանագրութիւնները և առաջարկութեան դիմաց իր պատասխանը որոշել երեքշաբթի օրը, երեկ. ժ. 6-ին։ (Հ. Գ.)

Պետերբուրգ.—Մէնշիկօվը «Ղզլարի սպանդանոց» յօդուածով շարունակում է յարձակվել Կովկասի Փոխարքայի վրա և պահանջում է ուժեղ իշխանութիւն։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան մէջ քննութիւնը պարզեց, որ իրաւաբանական բաժանմունքում կան 12,000 դեռ չը քննված գործեր։

Օդագնացութեան մրցութեան համար յատկացված է 120,000 ֆրանկ։

Բացվեց օդագնացութեան առաջին ռուսական ընկերութիւնը։ („Б.“)

Օդեսսա.—Կեղծ ընկալաթղթով Միացեալ բանկից ստացան հարիւր հազար րուբլի։ („Б.“)

Լոնդոն.—Յամառութեամբ խօսվում է, որ Կօրէայում ապստամբութիւն է. ճապօնական զօրքերի մի երրորդ մասը ուղարկված է այնտեղ։ („Б.“)

Աթէնք.—Երեան հանվեց քաղաքական դաւադրութիւն. գլուխ կանգնած էին աչքի ընկնող քաղաքական գործիչներ, պաշտօնեաներ և հրապարակախօսներ։ Կատարվում է քննութիւն։ („Б.“)

Բէլգրադ.—Սահմանագլխին սերբիական պահակախումբը ընդհարվեց ալբանացիների հետ, որոնք ջարդվեցին։ („Б.“)

ԱԼԲԱՆԱԿԱՆ ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐ

Սալօնիկ, 24 ապրիլ

Ապրիլի 21-ին Ֆերիզովիչից և Կաչանիկ կիրճից անյայտ ուղղութեամբ գնացած զօրքերը երևացին Չերնօլեվի լեռներում Եգերցա և Բուգակօվա գիւղերի մօտ և արշաւում են դէպի ալբանացիները, որոնք կենտրոնացած են Չերնօլեվի կիրճի մէջ։ Գործողութիւններին մասնակցում են մօտ քսան բատալիօն լեռնային թնդանօթներով և գնդակացիրներով։ Այսօր սպասվում է կռիւ։ Շէվքէթ Տուրգուտ փաշան դիմեց մի կոչով ազգաբնակութեանը, որով խիստ պատիժ է սպառնում ագիտատօրներին։ Գիւղերը ոչնչացնելու և զէնք կրողներին աքսորելու սպառնալիքի տակ՝ ազգաբնակութեանը առաջարկված է 15 օրվայ մէջ յանձնել զէնքերը։ Թղթակիցներին արգելված է շրջել ապստամբված տեղերը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ»*)

(Հրապարակական զրոյց յօգուտ Թիֆլ. Հայուհ. Բ. Ը. կարդացված ապրիլ 5-ին)

ԲԺՇԿԱՊԵՏ Ա. ԲԱԲԱՅԵԱՆԻ

Վերջին 5 տարին ձմեռները Պարիզ անցկացնելուց յետոյ, այս ձմեռ նորից Թիֆլիս մնալով՝ ինձ համար ցաւալի եղաւ մեր այստեղի հայկական ընկերական կեանքի դանդաղանալը, որ չասեմ ամայանալը, բացի մի երկու ուրախալի երևոյթները, ինչպէս օրինակ՝ տեղումս մի շատ օգտաւէտ գիտական հաստատութեան հիմնվելը, այն է՝ Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը, որի ընդհանուր ժողովներում հայ մարդիկ միասին հաւաքված հայերէն զեկուցումներ են լսում և իրանց փորձերը և տեղեկութիւնները դիւրաւ մայրենի լեզուով իրար հաղորդում։ Ուրախալի է նաև «Աղբիւր-Տարազի» Գրական-Գեղագիտական Սալօնի տարէ-ցարի հաստատվելը, որ արժանի է աւելի լայն շրջանների համակրութեան։

Առաջվայ ժամանակ Թիֆլիսում յայտնի էին մի քանի հայ տներ, որոնք հայկական սալօնների դեր էին կատարում, ուր մեր հայ մտաւորականները, ինտելիգենտ կոչված դասը, զանազան խմբակցութիւնների բաժանված՝ շաբաթը կամ երկու շաբաթը մի անգամ հրաւէրքի երթալով այդ գերդաստանների երեկոյթներին՝ յարմար միջավայր էին գտնում մտքերի փոխանակութեան, նորանոր գաղափարների և գեղագիտական նորութիւնների փոխադարձ հաղորդակցութեան. միևնոյն ժամանակ բնականաբար մշակվում էին այդտեղ մեր կեանքի հրատապ հարցերը, որոնք անմիջապէս գտնում էին մեր մամուլի բաժին։

Ես կը ցանկանայի, որ այսօրվայ իմ զրոյցը ձեզ հետ այդպիսի մի երեկոյթի օրինակ լինէր. ուստի թոյլ տուէք ինձ՝ ձեզ զբաղեցնել իմ մի նոր աշխատութիւնով, որ անցեալները հրատարակվեց «Եկեղեցական առողջաբանութիւն» վերնագրով և որի մասին ես ստացել եմ թէ՛ մասնաւոր նամակներով հեղինակաւոր անձերից և թէ մեր մամուլի միջոցով բաւական շատ քննադատութիւններ. սակայն մինչև օրս դեռ պատասխանած չեմ հրապարակով այդ ամենին։

I

Զրոյցիս նպատակն է այժմ՝ մէկ կողմից այդ քննադատութիւնների արժէքը պարզել, միւս կողմից՝ հաւաքական բացատրութիւն տալ գրքիս վիճելի կէտերի առիթով. այս կերպ՝ շօշափված վիճելի հարցերը անշուշտ աւելի և աւելի պիտի մշակվեն։ Սակայն նախքան զրոյցիս այդ նիւթին անցնելը պարտք է՝ ունկնդիրներին դեռ ծանօթացնել գրքիս բովանդակութեանը, որին շատերը ձեզանից գուցէ տեղեակ չեն, քանի որ առհասարակ տեղիս հայ ընթերցողների մեծամասնութիւնը սովոր է այժմ աւելի օտար լեզուներով նորութիւններ կարդալ, քան թէ հայերէն մի նոր գրուածք, որքան էլ սա ինքնուրոյն և շահեկան աշխատութիւն համարվի*)։

Գրքիս բովանդակութեանը համառօտ կերպով ծանօթացնելուց յետոյ, ես այժմ դառնում եմ իմ բուն նպատակիս, այն է՝ զեկուցանել ձեզ այն քննադատութիւնները, որոնք երևացին անցեալ տարվայ վերջում և այս տարվայ սկզբում և որոնք մինչև օրս իմ ձեռս հասած են։

Ընդհանրապէս պէտք է ասեմ, որ այս առաջին անգամն է, կարծեմ, վերջին տարիների մեր մամուլի բարքերին բոլորովին հակառակ, որ մեր զանազան կուսակցութիւններին պատկանողները և նրանց գրական օրգանները արդարութիւնով վերաբերվեցին մի նոր հայ հրատարակութեան և չը քաշկռտեցին նրան իրանց անձնական և «Թայֆայական» նեղ տեսակէտներով։ Եթէ վիճաբանութիւն և նկատողութիւններ կան գրուածքիս այս կամ այն կէտի դէմ, դրանք անձնական թշնամութեան և կուսակցական կոյր կրքի հետևանք չեն, այլ՝ միայն ճշմարտութիւնը պարզելու համար առաջ բերված։ Այդ կողմից շնորհապարտ եմ բոլոր քննադատներին մինչև օրս։

Մինչև այժմ եղած գրաքննութիւնները կարելի է բաժանել երեք դասի. առաջինը՝ մեր բարձրաստիճան հոգևորականների կողմից, երկրորդը՝ բժիշկ-ընկերներիս կողմից և երրորդը՝ ոչ-բժիշկ մասամբ ինձ յայտնի և անյայտ անձերի կողմից։

Առաջին դասից ես պէտք է նախ յիշատակեմ այստեղ խորին ակնածութեամբ մեր ազգընտիր նոր Հայրապետի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II-ի քննադատութիւնը իր ընդարձակ նամակի մէջ, որ բաղդ ունեցայ ստանալու անցեալ տարվայ նոյեմբերի վերջերին, և երկրորդ նամակով (յունվարի մէջ ստացված ի պատասխան իմ գրութեան) Նորին Սրբութեան թոյլտւութիւնը՝ հրապարակի յանձնելու որոշեալ կտորներ նախընթաց նամակից։ Ահա ինչ խօսքերով է սկսված այդ հեղինակաւոր նամակի քննադատութիւնը։ Ես բնականաբար պիտի բաց թողնեմ այդ կտորներից քաղաքավարական իմ անձիս վերաբերեալ բարեհաճ ածականները և դարձուածքները.

«Ձեր... «Եկեղեցական առողջաբանութիւն» անուն աշխատութիւնը ստացայ և ուշադիր հետևեցայ ձեր աշխատութեան ամեն մէկ տողին։ Անվիճելի ճշմարտութիւն մըն է այսօր թէ՝ սխալ ըմբռնուած քաղաքակրթութիւնը մէկ կողմէն, ագիտութիւնը, քարացած սովորութիւններն և նախապաշարումները միւս կողմէ բարոյից անկման, կրից անզսպութեան տեղի տուած՝ շարք մը տարափոխիկ հիւանդութիւններ, մանաւանդ վատ ախտը գոգցես փայփայանքով կը սնուցանեն և անհեփօրէն կը տարածեն։ Գիտական աշխարհն այս ողբալի վիճակին ի դարման, մանաւանդ այնքան ախտատարած մանրէներու գոյութեան հաստատուելէն ի վեր, առողջապահիկ պայմանները մեծ խնամքով կը մշակէ մարդկային սեռը այլասերումէ, ֆիզիքական քայքայումէ և նոյն իսկ տարաժամ մահուանէ փրկելու համար։

«Առողջաբանական գիտութեան և առողջապահիկ պայմաններու շարքէն դուրս պէտք չէր մնար և եկեղեցական առողջաբանութիւնը։ Ասի մշակելու առաջնութեան պատիւը... ձեզ կը պատկանի, ինչ որ մեծ և կարևոր պակաս մը կը լեցնէ մեր այնքան խնամքի կարօտ կեանքին մէջ։ Կը շնորհաւորեմ ձեզ և ամեն յաջողութիւն կը մաղթեմ»։

Այս առաջաբանից յետոյ Վեհափառ Հայրապետը մի առ մի թւում է գրքիս մէջ պահանջված նախ՝ այն բարեփոխութիւնները, որ այժմէն իսկ աստիճանաբար կարող են գործադրվել ըստ իր բարձր հայեցողութեան։ Ահա այդ կէտերը.

1) Եկեղեցիներում նստարաններ և աթոռներ ժողովրդի համար դնելը. 2) Եկեղեց. երաժշտութեան կարգաւորումը. 3) Եկեղեց. մէջ օդափոխիչ գործիք հաստատելը. 4) Ձմեռնային ժամանակ եկեղեցիների ջեռուցումը (տաքացնելը). 5) Ախտավարակ երկսեռ անձանց մինչև առողջանալը պսակման արգելը. 6) Գլխագնի և դրամօժտի ջնջումը. 7) Պահեցողութեան կամ պասի առողջաբանական տեսակէտով բացատրվելը. 8) Ծննդկան մայրերի 8—9 օրից անկողնից ելնելը և «քառասունքի» պահեցողութիւնը. 9) Գերեզմաններ ծառազարդելը. 10) Գերեզմանների շուրջը ծառաստանով թումբ շինելը. 11) Ննջեցելոց մարմինների լուացքն առողջապահիկ պայմանաց համաձայն կատարելը. 12) Ննջեցելոց թաղումը երեք օրով յետաձգելը. 13 (Դրա համար) գերեզմանատների մէջ մատուռ ունենալու պէտքը. 14) Բարեկան և մեռելահամբոյրի ջնջումը. 15) Մեռելահացի՝ քելեխի ջնջումը. 16) Ննջեցելոց երեսկալի և նրա յարակից կտաւե-

---

*) Տես նամակ Ա. Բաբայեանի, «Մշակ» № 75.

*) Այս ներածութիւնից յետոյ ես ունկնդիրներիս առջև պատկերացրի գրքիս համառօտ բովանդակութիւնը, որ կազմում է զրոյցիս Ա. մասը և որը տպագրութեան չենք յանձնում։ Ծան. հեղ.

Արգելվում է արևը մայր մտնելուց յետոյ տուն գալ առանց լապտերի:

Ծովով եկան բեդիֆների չորս բատալիօն: Վաղը սպասվում են 2 բատալիօն Ադրիանուպոլսից:

Ջէրնօլեվի կիրճը մաքրելու նշանակված զօրքերը երէկ հասան Ջէրնօլեվօ գիւղը: Սկսվել են բանակցութիւններ: Այդտեղ եկաւ նաև Ուսկիւբի վալի Մազհար-բէյը: Վերին Մօրավիայից տեղեկութիւններ չը կան: Պաշտօնապէս դեռ յայտարարված չէ Դիակօվօյի առման մասին ալբանացիների ձեռքով: (Հ. Գ.)

Սալօնիկ, 25 ապրիլի

Դեռ չը հաստատված լուրերի համաձայն, ալբանացիները գրաւել են Իփէկը: Ալբանացիները դիմում են նաև Պրիշրէնի վրա. երէկ եկան Դիբր գիւղը, որ հեռու է քաղաքից մէկ և կէս ժամ հեռաւորութեան վրա: Ալբանական շարժում է նկատվում Լաբայի հովիտում և Վուչիտրի շրջակայքում: Յարձակում է պատրաստվում Պրիզտինի վրա: Դիակօվօյում ալբանացիները հրապարակով ոչնչացրին երիտասարդ-Թիւրքերի կօմիտէի բաժանմունքի կնիքը և վերստին երդվեցին մինչև արեան վերջին կաթիլը պաշտպանել իրանց իրաւունքները: Վերին Մօրավիայի շրջանում Թիւրքաց զօրքերը կործանել են երեք ալբանական գիւղեր: (Հ. Գ.)

Ուսկիւբ.—Գիլիանի մօտ տեղի ունեցած կռւում Թիւրքերը կորցրին 32 զինւոր: Ալբանացիները ձեռք ձգեցին ամբողջ ռազմամթերքը: Այս րօպէիս նոր կռիւ է Ջէրնօլեվի կիրճում: („Б.“)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 25 ապրիլի

Վերջացաւ զինւորական մինիստրութեան բարենորոգման պլանը: Հաստատված են հետևակ և հեծելազօրի տեսուչների պաշտօններ: Զօրքերի թիւը որոշված է 40,000 մարդ, որոնցից 10,000-ը մտադրվում է պահել Ատրպատականում: (Հ. Գ.)

Թէհրան.—Զինւորների ապստամբութիւնը շարունակվում է. բարձր հոգևորականութիւնը սպառնում է պետական խնամակալին հեռանալ քաղաքից, եթէ ներկայ անտանելի դրութիւնը շարունակվի: Ճգնաժամը սուր կերպարանք է ստանում: («Б.»)

ԷԴՈՒԱՐԴ VII

Մենք արդէն յայտնեցինք Անգլիայի վեհապետ Էդուարդ VII-ի մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 23-ին, երեկոյեան ժամը 11 և 50 րօպէին, կարճ հիւանդութիւնից յետոյ, 69 տարեկան հասակում:

Մեծ-Բրիտանիայի Թագաւոր և Հնդկաստանի կայսր Էդուարդ VII Վիկտօրիա Թագուհու և նրա ամուսին պրինց Ալբերտի անդրանիկ որդին էր. Նա ծնվել է 1841 թ. նոյեմբերի 9-ին Լօնդօնում, Բուքինհէմի պալատում. մկրտութեան ժամանակ ստացաւ Ալբերտ-Էդուարդ անունը, բայց իբրև գահաժառանգ յայտնի է Ուէլսի պրինց կամ, ըստ ֆրանսիացիների, prince de Galles անունով: Նրա կրթութեան վրա հսկում էր յատկապէս հայրը՝ Ալբերտ պրինցը, որ մի շատ կրթեալ անձնաւորութիւն էր: Ընտանեկան կրթութիւնից յետոյ երիտասարդ Էդուարդը մտաւ Էդինբուրգի համալսարանը, իսկ 1858—60 թ. լսեց դասախօսութիւններ Օկսֆորդի և Կէմբրիջի համալսարաններում: Ապա նա ճանապարհորդեց Հիւսիսային Ամերիկայում:

Մտնելով զինւորական ծառայութեան մէջ՝ նա ստացաւ գնդապետի աստիճան և 1861 թ. մի քանի ժամանակ ապրեց զօրաբանակի մէջ, իսկ յետոյ ճանապարհորդութիւն կատարեց Արևելքում դօքտօր Ստէնլիի և Րիչարդ Օվէնի ուղեկցութեամբ: Վերադարձին Անգլիա՝ նա, իբրև Կօրնվալլիսան դուքս, լօրդերի պալատին անդամակցեց և իր հովանաւորութեան ներքոյ առաւ շատ բարեգործական հիմնարկութիւններ: Նա ամուսնացաւ 1863 թ. դանիական Թագաւոր Քրիստիան IX-ի դստեր՝ իշխանուհի Ալէքսանդրայի հետ, որ ռուսաց Մայր-Կայսրուհի Մարիա Ֆէոդորօվնայի հարազատ քոյրն է: 1875 թ. Էդուարդը դարձաւ անգլիական մասօնների մեծ մագիստր: Լինելով գահաժառանգ, նա քիչ էր մասնակցում Անգլիայի քաղաքական գործերին. 1875—76 թ. նա, լօրդ Բիկօնսֆիլդի պնդմամբ, մի ճանապարհորդութիւն կատարեց Հնդկաստան, որից յետոյ և Վիկտօրիա Թագուհին ընդունեց հնդկական կայսրուհու տիտղոսը:

Մտնելով բրիտանական զօրքի մէջ գնդապետի աստիճանով, հասաւ ֆելդմարշալի աստիճանին և համարվում էր նաև պրուսական զօրքի ֆելդմարշալ: Ալէքսանդր III ռուսաց Կայսրի մահից յետոյ, նա 1894 թ. այցելութիւն տուեց ռուսական արքունիքին: Վիկտօրիա Թագուհու մահից յետոյ, նա բարձրացաւ 1901 թ. յունվարի 22-ին (ն. տ.) անգլիական գահը, իբրև արքայ Մեծ Բրիտանիայի և կայսր Հնդկաստանի Էդուարդ VII անունով, և մի քանի օրից յետոյ հանդիսաւոր երդումն ընդունեց՝ հաւատարիմ մնալու սահմանադրութեան, իսկ փետրվարի 14-ին անձնապէս բացեց պարլամենտը գահական ճառով:

Էդուարդ VII-ի աւագ որդին, գահաժառանգ Ալբերտը մեռաւ 1892 թ., իսկ այժմ Անգլիայի գահն է բարձրանում նրա երկրորդ որդին՝ Գէօրգ Ֆերդինանդ Էրնէստ իշխանը (ծն. 1865 թ.), որ յայտնի է նաև Եօրքի և Կօրնվալլի դուքս և Ուէլսի պրինց անունով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

Ինչպէս հաղորդեցինք, ժողովը կայացաւ ապրիլի 23-ին, նախագահութեամբ բժշկապետ Բ. Նաւասարդեանի, և նրա շարունակութիւնն էլ եղաւ ապրիլի 24-ին:

Առաջին ժողովում գլխաւորապէս քննվեց ընկերութեան կենտրոնի և 40 ճիւղերի 1909 թ. հաշիւները: Խորհուրդը հրատարակել էր մի ընդարձակ տեղեկագիր 1909 թ. գործունէութեան մասին: Այդպիսի տեղեկագրերի հրատարակութիւնը անհրաժեշտ է, բայց տեղեկագիրը ունի դեֆեկտներ: Օրինակ՝ խորհրդի 1909 թւի ելևմուտքի հաշիւը ցոյց է տալիս, որ կենտրոնը ունեցել է մուտք՝ տոկոսիք, նուէրներ, անդամակցական վճարներ, երեկոյթներ, ճաշարանի, գրադարանի արդիւնք և այլն՝ ընդամենը 38,798 րուբ. 88 կ., իսկ ծախք ունեցել է 37,558 ր. 19 կ. և առ 1-ն յունվարի 1910 թ. կանխիկ դրամ՝ 1240 ր. 69 կ.: Կարելի էր հետևցնել, որ ուրեմն կենտրոնը ոչ միայն դեֆիցիտ չէ ունեցել, այլ և 1240 ր. օգուտ: Սակայն ժողովի անդամներից մէնը՝ Ս. Զերքեզեան տեղեկագրի մէջ տրված ակտիվի և պասսիվի հաշւեկշռի առիթով առաջ հարց է տալիս խորհրդին, թէ «ունինք դեֆիցիտ չունինք»: Խորհրդի կողմից նախագահը պատասխանում է. «Ոչ, չունենք»: Այն ժամանակ Ս. Զերքեզեան ցոյց տալով տեղեկագրի էջ 20—21-ը, ուր գրված է, որ առևտրական բանկից և պետական բանկից վերցված է մօտ 5800 ր., ապացուցանում է, որ այդ 5800 ր. իսկապէս դեֆիցիտ է: Եւ խորհուրդը խոստովանում է, որ այս դիտողութիւնը ճիշդ է: Տեղեկագրի մէջ ցոյց չէ տրված և ընկերութեան ընդհանուր ելևմտացոյցը, որպէսզի կարելի լինի իմանալ, թէ ամբողջ ընկերութիւնը, այն է՝ կենտրոնը և ճիւղերը ինչքան եկամուտ և ծախք ունեն: Դեֆեկտներ կան և ուրիշ կէտերում. այսպէս օրինակ՝ էջ 11-ի մէջ առաջ են բերված զանազան մասնաժողովների կազմերը, բայց մոռացված է առաջ բերել Աբովեան-Նազարեան գրական ֆօնդի համար կանոնադրութիւն կազմող մասնաժողովի կազմը, երևի մոռացմամբ կամ որևէ անձնական նկատումով:

Ապրիլի 23-ին՝ տեղական ճիւղերի ներկայացուցիչներից մէնը մի ճիշդ նկատողութիւն արեց, որ խորհուրդը, հրաւիրելով ճիւղերին ուղարկել իրանց ներկայացուցիչները ժողովին, չէ ուղարկել ժողովի զբաղմունքի առարկաների օրակարգը, որպէսզի ճիւղերը կարողանային ծանօթանալ և իրանց կարծիքը յայտնել: Խորհուրդը խոստացաւ յաջորդ անգամ այլ կերպ վարվել:

Ապրիլի 24-ին ժողովը քննեց Ս. Շահազիզի նուիրած գումարով կազմելիք Աբովեան-Նազարեան գրական ֆօնդի համար խմբագրված կանոնները: Ժողովը հաստատեց այդ կանոնները մի քանի փոփոխութիւններով և ընտրեց գրական ֆօնդի մասնաժողովի անդամներ Ղ. Աղայեանին, Աւ. Եզեկեանին, Ա. Բաբախանեանին և Եր. Լալայեանին: Այս մասնաժողովը պէտք է որոշէ, թէ հայ գրողներից ով կարօտ է օգնութեան և գրական ֆօնդի գումարի տոկոսիքից (տարեկան մօտ 300 ր.) օգնէ կարօտ գրողներին:

Ապա ժողովը ձեռնարկեց խորհրդի անդամների ընտրութեան, գաղտնի քուէարկութեամբ:

Վերընտրվեցին խորհրդի անդամներ Յ. Սպենդիարեան, Իսահակ Լիսիցեան, իսկ նոր ընտրվեցին Եփրեմ վարդապետ Սուքիասեան, Զ. Մամուլեան, բժիշկ Ա. Մխիթարեան. փոխ-անդամ ընտրվեց Մէլլանեան:

Պէտք է յիշենք և այն, որ ժողովը բաւական բազմամարդ էր, գոնէ բազմամարդ ժողովներից մէկն էր և նրան մասնակցում էին 64 անդամներ: Բացի դրանից մի քանի ճիւղերի կողմից եկել էին և ներկայացուցիչներ:

Չը մոռանանք յիշել և այն, որ այդ ժողովում ընկերութեան հովանաւորող ընտրվեց Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Հայրապետը:

ՄԻ ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

II

— Մի ցաւի մասին պէտք է խօսեմ ձեզ հետ,—դիմեց ինձ Անիի գիւղական շրջանից եկած Գ. Ղարիբեանցը:

— Պատրաստ եմ լսելու:

— Արդէն չորրորդ տարին է,—պատմեց նա,—որ մեր շրջանի հացահատիկները փչանում են թէ չորութեան և թէ դաշտային մկների բազմանալու պատճառով: Այս տարի էլ սկսել են երևալ և վտանգ են սպառնում ցանքերին:

— Ո՞ր գիւղերին են վնասել:

— Ղօշավանք, Ղուլուջուղ, Ջրփլի, Ղիզիլքիլիսա, Ղեղաջ և ուրիշներ: Մկները շատ սիրում են գարին, ուտում են ամեն տեսակ հացահատիկ, նոյնպէս խոտ, կտաւատ և խուսափում են սօլօրուր իւղաբոյսից, որ նման է ժանանեխին:

Ես բացատրեցի, որ մկներ կոտրելու համար կայ յատուկ շիլլուկ, կայ մկնդեղ՝ խառնուրդ:

— Այդ մենք իմացանք անցեալ տարի և փորձեցինք երկու եղանակն էլ. բայց օգուտ չեղաւ: Չը գիտենք պատճառը:

— Կարելի է մկները ուրիշ տեսակի են, կամ մկներ չեն, այլ մի ուրիշ կենդանի. կամ գուցէ հեղուկը հնացած է եղել:

Բացատրութիւններից երևաց, որ արդարև յիշված գիւղերում երևացած կենդանիները հասարակ դաշտամկներ չեն, այլ առնէտներ, որոնք շատ խոշոր են դաշտամկներից: Նրանք ունեն դեղին մորթի, նման աղուէսի մորթուն: Եթէ այդ մորթիները գին ունենային և յարգի լինէին վաճառանոցում, գիւղացիները կարող էին նրանց կոտորել շահադիտական նպատակով:

Պատմողը խոստացաւ ուղարկել առնէտների նմուշները Թիֆլիս՝ նրանց տեսակը որոշելու համար մասնագէտների ձեռքով:

Այնուհետև գնացինք ծանօթանալու մի նոր գեղեցիկ փորձի հետ, որ արել է ալէքսանդրապօլցի Օհանջանեանը իր կապալով վերցրած հողի վրա:

Նա փորձ է արել ջուր հանելու իր հողի վրա: Եւ ունեցել է մեծ աջողութիւն: Փորելով 22½ արշին՝ նա հասել է ջրի առատ շերտի: Մաքրելով այդ շերտը՝ նա շարել է հորի այդ մասը քարով և ստացել է վեց արշին հաստութիւն ունեցող ջրի մի սիւն, որը չէ սպառում, որքան էլ ջուր հանվի հորից:

Ջուրը հանվում է առանձին էլեքտրական շարժիչով, որը գնվել է դիպուածով 1500 րուբլով:

— Որքա՞ն ջուր կունենաք օրական,—հետաքրքրվեցինք մենք:

— Օրական 21,000 վեդրօ:

Մենք փորձեցինք ջուրը: Մաքուր, համեղ ջուր էր: Բաւական սառն էր: Ոչ ոք չէր փորձել ջերմաչափի միջոցով որոշելու ջրի սառնութեան աստիճանը:

Օհանջանեանը բացի այդ շինում է մի յատուկ աւազան, որի մէջ ջուրը պէտք է ամբարվի և հարկաւոր եղած ժամանակ մեծ հոսանքով մատակարարվի հողին:

Աւազանը ունի 80 խորանարդ սաժէն ամփոփ:

Ջուրը, մնալով աւազանում, փոքր ինչ կը տաքանայ և, կլանելով իր մէջ օդի մի որոշ քանակութիւն, կը դառնայ աւելի օգտաւէտ:

— Ո՞րքան նստեց ձեզ վրա ջրհոր փորելը և տան շինուածքը,—հարցրինք մենք:

— 2,500 րուբլի, որից 600 րուբլին յատկապէս գործադրվեց ջրհորի վրա:

Օհանջանեանը իր հողը վերցրել է կապալով քաղաքային դաշտերից: Բոլորը 10 դեսեատին է: Կապալառուն խոստացել է տարեկան վճարել քաղաքին 150 րուբլի շարունակ 24 տարվայ ընթացքում:

Օհանջանեանի փորձը արժանի է ամեն ուշադրութեան: Պէտք է նկատել, որ Ալէքսանդրապօլը և շրջակայքը ունեն ստորերկրեայ ջրերի մեծ պաշարներ: Եւ եթէ միւս քաղաքացի երկրագործներն էլ հետևեն նրա օրինակին, այն ժամանակ կը ստացվի ոռոգվող հողերի մեծ տարածութիւն, որտեղ կարելի է բուսցնել թէ հացահատիկներ, թէ զանազան տեսակի բանջարներ ու ընդեղէններ և թէ նոյնիսկ մրգատու ծառեր:

Փորձը ամեն կողմից ուսանելի է:

Ա. Քալանթար

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ

(Յօբելեանի առիթով)

III*)

1909 թ. ապրիլի 5-ին Եալտայի հայոց ծխ. դպրոցում սկսվեցին խմբապետ Գ. Միրիանեանի կազմած քառաձայն երգեցիկ խմբի փորձերը: Սկզբում խմբապետը մտադիր էր Սևաստոպոլից իր պատրաստի խումբը տանել Եալտա և հայկական համերգ տալ: Այդ մասին Եալտայի ծխ. դպրոցի հոգաբարձուների և ձեռնհաս մարդկանց ժողով կայացաւ, որին ներկայ էր նաև երաժշտագէտ Ալ. Սպենդիարեանը:

Որոշվեց առաջարկել Միրիանեանին տեղական սիրողներից խումբ կազմակերպել, որպէսզի հայկական ժողովրդ. երգերը տարածվեն և Եալտայի հայ հասարակութեան շրջանում:

Սկզբում բոլորովին յոյս չը կար, թէ Եալտայում կը գտնվեն այնքան մասնակցողներ, սակայն խմբում մասնակցողների թիւը քիչ-քիչ անցաւ 40-ից: Փորձերը կատարվում էին ծխ. դպրոցում: Այն ժամանակ դպրոցը տեղաւորված էր «Գրանդ-Օտել» հիւրանոցի թատրօնական դահլիճում, որ ամեն յարմարութիւն ունէր պարապմունքների համար:

Ամեն օր, ամսից աւելի, երեկոյեան ժամը 8-ից յետոյ, ծխ. դպրոցը հայկական ակումբի կերպարանք էր ստանում. հաւաքվում էին զանազան պարապմունքի անձինք և, երգեցողութեան փորձերը սկսելուց առաջ, խօսում էին, վիճում կամ մի բան կարդում: Գտնվեցին մասնակցողների մէջ և նուագողներ կովկասեան լարային գործիքների վրա, ինչպէս և պարողներ կովկասեան և Ղրիմի պարեր: Քիչ-քիչ կազմակերպվեց և սազանդարական խումբ, որը նոյնպէս պարողների հետ փորձեր էր անում: Պատահում էին, ի հարկէ, երբեմն ընդհարումներ ու ինցիդենտներ, բայց այդ դէպքերը կրելով մասնաւոր բնաւորութիւն՝ գործի ընդհանուր աջողութեանը չէին խանգարում:

Ահա այստեղ էր լինում յաճախ նաև Ալ. Ծատուրեանը, փորձերի ժամանակ երկար նստում և մեծ բաւականութեամբ լսում հայկական երգեցողութիւնն ու նուագածութիւնը: Նրա ներկայութիւնը, կարծես, առանձին ոգևորութիւն էր ներշնչում մասնակցողներին և ամենքի համար դուրեկան և ընդունելի էին նրա ընկերական նկատողութիւններն ու ցուցմունքները:

Փորձերին երբեմն ներկայ էին լինում և ուրիշները, բայց Ծատուրեանը «մերն» էր համարվում:

Մայիսի 10-ին կայացաւ կօնցերտն անսպասելի աջողութեամբ:

Ծատուրեանը հրաւիրված էր իբրև պատուաւոր հիւր:

Շփվելով միմեանց հետ փորձերի ժամանակ, հայ երիտասարդները այն եզրակացութեան եկան, որ ցանկալի է դպրոցին կից հասակաւորների համար մշտական դասընթացքներ կամ գոնէ կիրակնօրեայ դպրոց հիմնել, իսկ ծխ. դպրոցում ընդունակ երեխաների համար երաժշտութեան կանոնաւոր դասեր մտցնել:

Ալ. Ծատուրեանը իր կողմից միշտ խրախուսում էր երիտասարդներին և պարտաւորեցնում նրանց՝ աշխատել, առանց վհատելու աշխատել:

Եալտա Յար. Խաչատրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

- Թագաւոր Կայսրը բարեհաճել է հաստատել մինիստրների խորհրդի այն որոշումը, որի համաձայն Շուշու Մարիամեան դպրոցի պարտքը պետական գանձարանին այլևս չէ վճարվելու:
- Երկու շաբաթով իր կալուածքն է մեկնում դէպի Ռուսաստան Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացին:
- Վերադարձան Պետերբուրգից Փո-

զէնների ջնջումը կամ ապանեխման (դէզինֆէկցիայի) ենթարկելը. 17) Մեռելական մետաղեայ, ինչպէս և շինծու ծաղիկներով (որոնք պահվում են ուրիշների էլ գործածելու համար) պսակներ դնելու նորամուտ սովորութեան աւելորդութիւնը և վնասները ժողովրդի համար. 18) Ննջեցեալները դագաղակառքով՝ փոխանակ ուսերի վրա՝ գերեզման փոխադրելը. 19) Միևնոյն մեռելադագաղի հասարակաց գործածութեան համար ամեն անգամ ապանեխման ենթարկելու կարիքը. 20) Մեռելաթաղ քահանայից կառքով գերեզմանոց գնալու թոյլտւութիւնը:

«Այս եւ ասոնց նման կէտերը կամ բարեփոխումները Հայաստանեայց Եկեղեցւոյ հայեցքով կանոնական արգելք մը չունին եւ կրնան այժմէն գործադրուիլ աստիճանաբար՝ ուր որ յարմարութիւն եւ միջոցներ կան»:

Վեհափառ Հայրապետն իր երկրորդ նամակում բարեհաճել է գրել.

«Կարելի էր եկեղեցիները ելեքտրական կանթեղներով լուսաւորելը նոյն այդ 20 կէտերու կարգն անցնել, ինչ որ սակայն մոմավաճառութենէ գոյացած շահուն կը բաղխէր, զոր իրաւամբ դիտած էք ձեր «Եկեղեցական առողջաբանութեան» մէջ: Այսուամենայնիւ՝ որտեղ որ յարմարութիւն ունին և կը խնդրեն՝ կը թոյլատրուի, ինչպէս թոյլատրեցինք Սիմֆերօպօլի եկեղեցիին, միայն տաճարներու բեմի կերոնները և ժամերը պահելով»:

Գալով իմ գրքիս մէջ շօշափված աւելի ծանր խնդիրներին և առողջապահական տեսակէտով բարեփոխելու պահանջներին, Վեհափառը այդ կարգի մէջ դրել է հետևեալ կէտերը.

«1) Դիակիզումը. 2) Ս. հաղորդութեան մասնակցելու մատակարարութեան եղանակի փոփոխութիւնը. 3) Կուսակրօնութեան և քահանայից կրկնամուսնութեան խնդիրները. 4) Փեսացու և հարսնացու անձանց ճշգութեամբ տարիքի որոշումը. 5) Ազգակցական, խնամեկական և կնքահայրական ճիւղահամարի փոփոխութեան խնդիրները. 6) Ամուսնալուծման խնդիրը կանոնական սահմաններով ընդլայնելը:

«Այս և այլ ասոնց յարակից առողջաբանական պահանջները, որոնց մէջ ուշադրութեան արժանի աւելի ծանր խնդիրներ ալ կան, Հայաստանեայց ընդհանուր Եկեղեցւոյ իրաւասութեան կը վերաբերին: Այս կարգի խնդիրները բարեփոխելու, լուծելու և ի նորոյ կանոնելու հեղինակութիւնը՝ հայաստանեայց ընդհանուր համազգային եկեղեցական ժողովին կը պատկանի:

«Բայց գիտէք արդէն, թէ միայն քաղաքական տիրող հանգամանաց և պատճառներու հետևանօք՝ 6 դարէ ի վեր կարելի եղած չէ համազգային եկեղեցական ժողով գումարել: Այս ժողովի գումարման պէտքը սակայն այլևս անհրաժեշտ դարձած է. ուստի Թիւրքիոյ հայոց արդի կացութիւնը աստիճան մը անդորրանալէ և Ռուսիոյ հայոց կարգ մը խնդիրները յարդարուելէ յետոյ՝ պիտի ձեռնարկենք այդ ընդհանուր ժողովի գումարման գործին, կը յուսամ թէ յաջողինք»:

Հետևեալ տողերով Վեհափառը վերջացնում է իր նամակը.

«Նուիրական պարտ կը համարիմ այժմէն հաստատապէս յայտնել և յայտարարել, թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատոյ դաւանութիւնն ու վարդապետութիւնն ամեն պարագայի մէջ անձեռնմխելի պիտի մնայ, ինչ որ անպայման կը պահանջէ անոր գոյութեան եւ ինքնուրոյնութեան անխախտ պահպանման բացարձակ պէտքը»:

Մեզ կը մնայ խոնարհվել հայրապետական այդ որոշման առաջ և մաղթել աջողութիւն Նորին Սրբութեան բարձր նպատակին՝ գումարելու մեծ ժողովը, որը պիտի լինի իր կաթողիկոսութեան ամենայիշատակելի գործը և թագն ու պսակը այն եկեղեցական բարեփոխումների, որոնց մուտքը իր հայրապետական իրաւունքով ինքը սկսած է արդէն և յուսալի է թէ շարունակէ աննկուն, ընտրելով իրան օգնականներ, հանգամանքների ներածի չափ, լուսամիտ, եռանդուն և ժողովրդի իսկական ցաւերը հասկացող թէ սինօդականներ և թէ թեմական առաջնորդներ:

Դառնամ այժմ մի այլ բարձրաստիճան հոգևորականի համառօտ քննադատութեան, այն է՝ Կ. Պօլսի նախկին պատրիարք Օրմանեան արքեպիսկոպոսի նամակին: Նորին սրբազնութիւնը գրում է.

«Իր ընդհանուր գիծերուն մէջ համամիտ եմ ձեր «Եկեղեցական առողջաբանութիւն» երկասիրութեան, երբ որ առողջաբանական պէտքերը իբր սկզբունք կը նշանակէք: Արդէն կրնանք ըսել թէ եկեղեցին՝ կամ լաւ ևս՝ ամեն կրօնական հաստատութիւն յառաջընթաց առողջաբանն է եղած աշխարհի մէջ»:

Այս տողերը ես դիտմամբ ընդգծում եմ, իբրև մի հնուտ եկեղեցական իրաւագէտի կարծիք, ի հաստատութիւն իմ գրքիս 3-րդ ընդհանուր եզրակացութեան, որ շատ կարևոր է յետադէմ քննադատներիս համար:

Շարունակելով սրբազան Օրմանեանի նամակը՝ բերեմ երկու նրա խորհրդածութիւնները. 1) «Ինչ-ինչ եկեղեցական սովորութիւններ, որոնց բարեփոխումը կը պահանջէք, այնչափ սերտ կերպով կապուած են կրօնական կանխակալ կարծիքներու հետ, որ անոնց հետ մաքառիլ դժուար է, և ինչպէս 19 դարեր մարդկութեան հետ ապրեցան անհակառակ, 19 ևս, գոնէ 10 ևս կրնան տակաւին ապրիլ խաղաղութեամբ»:

Այո, պէտք է իսկոյն պատասխանեմ սրբազանի տողերին՝ չերկարելու համար, «կրնան ապրիլ», եթէ մեր ժողովուրդը այսուհետև էլ դեռ 10 դար մնայ նոյն տգիտութեան և խաւարի մէջ առողջապահական պահանջների նկատմամբ, ուր որ այժմս է:

Ահա և երկրորդ կէտը սրբազանի նամակում. «Ինչ-ինչ եկեղեցական կարգեր ալ նշանակած էք, որ միայն եկեղեցւոյ յատուկ չեն, այլ ընտանեկան և կենցաղական շրջանակներու ալ կը պատկանին, և ասոնց հակառողջական կողմերը փարատելու համար պէտք էր նախապէս ազդեցութիւն գործել զանազան համախմբութեանց վրայ, թատրոններու, ակումբներու, սրճարաններու՝ ընտանիքներու միջոցաւ. հետևաբար լաւ ընտրողութեան պէտք կայ... Դուք նորընտիր Կաթողիկոսին դիմած էք, և հարկաւ անոր կողմէ պէտք եղածը կը տնօրինուի: Առ այժմ այսչափով կը փակեմ իմ տեսութիւնները և կը շնորհաւորեմ զձեզ ոչ թէ ազգիս, այլ աշխարհիս պատկանող նիւթի մը վրայ առաջին անգամ ձեռնհասօրէն խօսած ըլլալուդ համար»:

Հոգևոր դասի քննադատութեանց շարքում պէտք է յիշել «Հովիւ» շաբաթաթերթի անցեալ տարվայ 46-րդ համարի գրախօսականը Pessimiste ստորագրութեամբ: Ընդունելով աշխատութեանս այն թերութիւնները, որոնց ինքս էլ ակնարկած եմ, Pessimiste-ը լիակատար համակրութիւն է ցոյց տալիս իմ պահանջած բարեփոխումներին և իր կողմից պնդում է նրանց շուտափոյթ իրագործման կարևորութեան վրա:

Վերջերս էլ դարձեալ «Մշակ» լրագրում (այս տարվայ № 54) երևաց մի յարգելի հոգևորականի՝ Մեսրոպ աւ. ք. Մելեանի գրախօսականը գրքիս առիթով: Տէր Մեսրոպ հայրը գաղափարակից է ինձ գրքիս համարեա բոլոր կէտերում: Իր այս յօդուածում իմ փոխարէն բժիշկ ընկերներս ընդդիմախօսութիւններին մի երկու շատ կարևոր բացատրութիւններ է տալիս. և որովհետև նրա շօշափած նիւթը և բացատրութիւնը զրոյցիս երկրորդ բաժանմունքին կը վերաբերին, այնտեղ և պիտի յիշեմ մանրամասնօրէն: Առ այժմ այսքանն է հոգևոր դասի վերաբերմունքը իմ աշխատութեանս:

Այդ վերաբերմունքը, ինչպէս տեսանք, բարեբաղդաբար շատ մասով բարեհաճ է մեր պահանջած եկեղեցական բարեփոխումներին: Այս ուրախալի վաւերացումով վերջացնում եմ զրոյցիս առաջին բաժինը *):

---

*) Տես «Մշակ» № 85 և 86.

*) II և III բաժինները իրանց ընդարձակութեան պատճառով պիտի տպագրվեն առանձին՝ ներկայ յօդուածիս հետ իբրև «յաւելուած» „Եկեղեցական առողջաբանութիւն“ գրքի:

խարքայի խորհրդի անդամ Զունկովսկին և Թիֆլիսի հասարակական գրադարանի ու թանգարանի վերատեսուչ Կազնակովը։

◆ Պատւի դատարանը գտաւ, որ ժուռնալիստներ Լ. Կիպիանին և Վլ. Նազուրսկին մեղաւոր են այն բանում, որ բաւականաչափ մեղմացուցիչ հանգամանքներում մտան «Курьеръ» ընկերութեան մէջ 1909 թ. յունիսի 10-ի պայմանագրով, որի էութիւնը և նպատակը հակասում է անկախ ժուռնալիստիկայի տրադիցիաներին և պատգամներին։ Անմեղ են ճանաչւում նրանք անոնիմ ընկերութիւնից և այլ արդիւնաբերական ընկերութիւններից կաշառված լինելու մէջ։

◆ Մօտենում է գերասան Գէդէօն Միրզաեանի յոբելեանի կատարման օրը, այսինքն մայիսի 6-ը, Արտիստական ընկերութեան շինութեան մէջ։ Աւելի եռանդով նախապատրաստական աշխատանքների վրա են վրացիները։ Պէտք է սպասել, որ հայ հասարակութիւնը յետ չի մնայ իր աշխատաւոր մշակներից մինի 25 երկար տարիների գործունէութիւնը թատրօնական ասպարիզում ըստ արժանոյն գնահատելուց։

◆ Թիֆլիսի քաղաքագլխի պարտականութիւնը դարձեալ կատարում է Ալ. Խատիսեանը, որովհետև իշխան Ջերքէզովը Պետերբուրգից վերադառնալուց և մի քանի օր միայն զբաղվելուց յետոյ դարձեալ իրան վատ զգաց և ներկայումս պառկած է անկողնում։

◆ Այս մայիսի 1-ից պօստում այլևս չեն ընդունվելու 1, 2, 3, 4, 7, 10, 14, 15, 25, 50 և 70 կոպէկանոց նամականիշները, քանի որ դրանց փոխարէն պատրաստված են նոր տեսակի նամականիշներ։

◆ Կովկասի Փոխարքայի պալատի պարտէզում կազմած յօգուտ ս. Նինայի օրիորդաց դպրոցի զբօսանքը ունեցաւ կատարեալ աջողութիւն։ Զուտ արդիւնքը անցնում է 5000 րուբլուց։

◆ Զանգեզուրի գաւ. 3-րդ մասի պրիստաւ Վ. Մամուլաշվիլին սպանվել է պարսիկ կոնտրաբանդիստների ձեռքով։

◆ Օզուրգէթի գաւ. Մամադի գիւղում գտնվել են 54 հատ դատարկ պղնձէ ռումբեր։

◆ Կիրակի, ապրիլի 25-ին, Կուսանաց վանքում կատարվեց հոգեհանգիստ ի յիշատակ Յովնանեան-Մարիամեան օրիորդական դպրոցի հիմնադիրների։ Պատարագին երգում էին կոյսերը, որոնք և կատարեցին հոգեհանգիստը, որին ներկայ էին դպրոցի հոգաբարձուները, աշակերտուհիները և ուսուցիչներն ու վարժուհիները։

◆ Ֆինանսների մինիստրը թոյլատրել է յետաձգել Գանձակի կալուածատէր Ն. Մէլիք-Բէգլարեանի տուրքերի գանձումը 5 տարով։ Տուրքերի գումարն է 2784 ր. 28 կ.։

◆ Կովկասի Փոխարքան թոյլ տուեց Կովկասի բեմերի վրա խաղալ Լ. Անդրէևի «Մարդու կեանքը» պիէսի հայերէն թարգմանութիւնը, որ կատարել են Անահիտ և Մարիամ Շահվերդեանները։

◆ Քութայիսի բանտում յայտարարված է սովադուլ։ Բանտն է այցելել նահանգապետը։ Սովադուլը շարունակվում է։ («Б.»)

◆ Բագւի բանտերում և բանտարկեալների տան մէջ ներկայումս գտնվում են ընդամէնը 1442 մարդ, որոնցից 1073-ը կենտրոնական բանտում, ժամանակաւոր կայանում—313 և բանտարկեալների տանը 56։ Հիւանդների թիւն է 62։ («Б.»)

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ապրիլի 24-ին Թիֆլիսի ոստիկանապետ գնդապետ Զասիպկինը 1-ին քաղաքամասի պրիստաւի հետ դիմեց այս օրերս բացված Վէրայի այգիները և զուարճատեղիները, որով շատ տեղերում երևան հանվեցին սանիտարական-առողջապահական զանցառութիւններ։ Այգետէրերին 4 օր ժամանակ է տրված վերացնելու նկատված դեֆեկտները։

◆ Ապրիլի 26-ին կախաղան բարձրացրին զինւորա-նահանգական դատարանի վճռով Ջիբրայիլ Բենիամինովին՝ Սուրամի պրիստաւ Ալբերտովին սպանելու փորձ անելու և ուրիշ յանցանքների համար։ Յիշեալ Բենիամինը մինն էր նաև Թիֆլիսի տնատէր Ցեֆելովին սպանողներից։

◆ Թիֆլիսի ոստիկանապետն առաջարկել է պրիստաւներին և խուզարկու բաժանմունքի կառավարչին որոնել և գտնել՝ 1) Արշակ Սարգսեանին, որ հեռացել է Նիկօլայեվսկայա փող. № 96 տնից, 16 տարեկան. 2) Մօլօկանսկի փող. № 54 տանը ապրող Գէորգ Աբրահամեանին, 33 տարեկան։

◆ Արգելվում է աֆիշաներ և յայտարարութիւններ կպցնել տների և ցանկապատների վրա։

◆ Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ թիֆլիսեցիներ Սերգէյ Կուպրիանը և Հաջի-Ֆարաջուլաևը ենթարկվում են՝ առաջինը 100 ր. տուգանքի ոստիկանական մի պաշտօնեայի վիրաւորելու համար և երկրորդը 25 ր. տուգանքի միսը սակագնից բարձր ծախելու համար։

◆ Ապրիլի 24-ին, եր. ժ. 10½-ին, Նիկօլայէվսկայա փող. դռնապան Պետրոսեանը № 91 տան դրան առաջ գտել է երկու շաբաթական մի նորածին մանուկ, որ ուղարկված է Օլգինսկի ինստիտուտը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մակար Չմշկեան. «Գիսաւորները Տիեզերքում», Թիֆլիս, 1910 թ., գինն է 20 կ.։

Յարմար ժամանակին է լոյս տեսել Մ. Չմշկեանի գրքոյկը։

Երկնակամարի վրա արդէն երևում է Հալլէյի գիսաստղը, գիտնականները ուսումնասիրում են նրան հեռադիտակներով, համաշխարհային մամուլը արձանագրում է գիսաստղի շարժումները։

Գրքոյկը տալիս է պատմական տեղեկութիւններ գիսաստղերի առաջացրած նախապաշարմունքների մասին, նկարագրում նրանց կազմութիւնը և շարժման արագութիւնը, հաղորդում է ուրիշ երկնային մարմինների հետ գիսաւորի հանդիպման ենթադրեալ հետևանքները և մանրամասօրէն կանգ է առնում Հալլէյի գիսաստղի նկարագրութեան վրա։

Գրքոյկում զետեղված են գիսաստղերի նկարներ և աստղաբաշխ Հալլէյի պատկերը։ Այդ աստղաբաշխը, որի անունն է կրում ներկայ գիսաստղը, անգլիացի է, ապրել է 1656—1742 թւերին։ Նա նկարագրել է գիսաստղը մանրամասօրէն 1680 թ.։

Հալլէյի գիսաստղը երևում է երկնակամարի վրա 74—79 տարին մի անգամ։ Եւ Քրիստոսի ծննդից յետոյ երևացել է 25 անգամ։

Եւ որովհետև մինչև այժմ ոչ մի վտանգ չէ առաջացել այդ գիսաստղից, ուստի գրքոյկի վերջում յոյս է յայտնված, որ գիսաստղի ներկայ 26-րորդ այցը կանցնի անվտանգ մեր երկրագնդի համար։ Ա. Ք.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Միանդաբ, 10 ապրիլի

Քիւրդստանը խառն է։ Սև ամպերը, որոնք կարծես Քիւրդստանի հօրիզոնը կապալով լինեն վերցրած, չարագուշակ փոթորիկ են սպառնում։ Քիւրդը, դարերի այդ ըմբոստ զաւակը, իր կիսավայրենի, խելառ անտարբերութեամբ կարծես մրցում է էվօլիւցիայի, յեղաշրջման հետ և առաջադիմութեան, զարգացման ամենաննշան քայլ անգամ չէ ցոյց տալիս։ Տարիներ, դարեր են գլորվում միմեանց ետևից, ստեղծվում են նոր պայմաններ, ծնվում են նորանոր գաղափարներ, մարդը, բանական արարածը փոխվում է, շտկվում, կոկվում, ազնւանում և համակերպվում տիրող պայմանների հետ, սակայն քիւրդը, նոյնիսկ դաշտային, նստակեաց քիւրդը, իր յամառ հաւատամքն ունի, իր անդրջրհեղեղեան տեմպերամենտը. միշտ ըմբոստ, միշտ վայրենի, միշտ յետադէմ ու անշարժ...

Պարսկաստանի ներկայ «սահմանադրական» շարժումները և օրէնքները գոյութիւն չունեն քիւրդի համար. «մաշրութէ» բառը ըստ քիւրդի նշանակում է անիշխանութիւն, «մէջլիս», «անջուման» բառերը անորոշ բովանդակութեան տներ։ Քիւրդերը դեռ ևս կարծում են, որ երկիրը թագաւոր չունի, որ գահը յափշտակված է, որ զանազան բաղդախնդիրներ օգտվում են հանգամանքից և իւրացնում գիւղեր, դիզում գանձեր և այլն և այլն։

Դեռ նոր էի ոտք դրել Քիւրդստանի սահմանը, երբ լսեցի, որ ամսիս 1-ին արիւնահեղ կռիւ է պատահել Մուքրիանի երկու հզօր ցեղապետների, Հաջի-էլ-խանի և Ղոչբէկի միջև։ Երկու ցեղապետներն էլ բանակներ են հանել իրար դէմ և երկու օր կռիւ տալուց, մի տասնեակ զոհեր տալուց յետոյ՝ զինադադար են արել, որպէսզի, երբ դադարէ նրանց սահմանը բաժանող Թաթավի մեծ գետի հեղեղները, նորից վերսկսեն պատերազմը աւելի ահեղ և աւելի կազմակերպված։ Ոչ մի միջամտութիւն չէ ընդունված. կռիւը հաւանականաբար վերսկսվելու է ամսիս վերջերին։

Օրը ցերեկով թալանվում են գիւղեր, կողոպտվում են կարաւաններ, յափշտակվում են կալուածքներ, սպանութիւններ են լինում, հարստահարվում են թոյլերը, ըմբոստանում և ծայրայեղ յանդգնութեան հասնում ուժեղները... Երկիրը կատարեալ անարխիայի մէջ է։ Քաղաքի—Սօուջ-Բուլաղի—դատաւորը, մի թոյլ և անպէտք շահզադէ, անունով միայն գոյութիւն ունի. ոչ ոք նրան չէ հարցնում, նշանակութիւն չէ դարձնում. խուրաքանչիւրը կառավարում է իրան՝ ինչ չափով որ ներում է իր ույժերը։ Գործում է և Միրզա-Ֆաթթահ-ղաղին Քիւրդստանի այդ հզօր հոգևորականը, այդ անխիղճ, անվեհեր ագիտատօրը յանձին Պարսկա-Քիւրդստանի ազատագրութեան. երկրի ղեկը այժմ բացառապէս գտնվում է այդ հսկայ ձեռքի մէջ...

Որպէս մի նմոյշ Մուքրիանի քիւրդերի հասկացողութեան և դատողութեան՝ ես այստեղ առաջ կը բերեմ մի քանի հարցումներ, որոնք տուեցին ինձ զանազան մարդիկ, դրանց մէջ և իշխանաւոր-կալուածատէրեր, պաշտօնական տիտղոսներ կրող թագաւորականներ և առհասարակ այնպիսի անձնաւորութիւններ, որոնք երկար տարիներ ժառանգական իրաւունքներով միշտ անմիջական կապ և յարաբերութիւն ունեն կենտրոնական կառավարութեան հետ և համարվում են որպէս «դիւանագէտներ»։

— Մամադ Ալի շահը եկա՞ւ,—հարցրեց մէկը։

— Ո՞ւր, ինչ Մամադ Ալի շահ,—ասացի ես զարմացած։

— Ուրեմն դեռ Թաւրիզ չէ՞ հասել. չէ՞ որ ռուսաց զօրքը շահին բերել է Ջուլֆա, որպէսզի Թաւրիզում գահ նստէ...

— Այդպիսի բան չը կայ. Մամադ Ալի միրզան այժմ Օդեսսայումն է և մտածել անգամ, թէ նա նորից կը վերադառնայ Պարսկաստան ոչ միայն որպէս շահ, այլ նոյն իսկ որպէս սոսկ քաղաքացի, անմտութիւն է. ճիշդ է, վերջերս ռուսաց զօրքն անցաւ Ջուլֆան, բայց դա բոլորովին կապ չունէր գահընկեց շահի հետ. քաղաքական որոշ հանգամանքների արդիւնք էր դա, և զօրքը կրկին վերադարձաւ՝ առանց սահմանն անցնելու։

Այժմ հերթը նրանցն էր զարմանալու. շատերը թերահաւատութեամբ վերաբերվեցին դէպի իմ խօսքերը, կարծելով որ ես որոշ նկատումներով ծածկում եմ իրողութիւնը։

— Ուրեմն երկիրը հէնց այսպէս անտէ՞ր է մնալու. թագաւոր չը կայ, «անջուման» չը կայ, բաս ո՞վ պիտի կառավարի...

— Զարմանում եմ ձեր հարցերի վրա. դուք կարծէք ապրում էք այնպիսի մի վայրում, ուր տարիների ընթացքում ոչ պօստի և ոչ լրագրի երես չէք տեսնում, այն ինչ այդպէս չէ, այստեղ ստացվում է թէ պօստ, թէ լրագիր և թէ գործում է հեռագիրը. ես չեմ հասկանում, թէ ինչ հիման վրա դուք կազմել էք այն համոզմունքը, որ երկիրը անիշխանութեան մէջ է, ոչ թագաւոր կայ և ոչ էլ անջուման։

— Մենք, իհարկէ, տեղեկութիւն ունենք, բայց մօտ օրերս, երբ ռուսները կալանաւորեցին Սաթթար և Բաղըր խաներին և ուղարկեցին Թէհրան, մենք լսում ենք, որ այն օրվանից փակվել է մէջլիսը, քանդվել անջումանները և Մամադ-Ալի շահը շուտով պիտի Թաւրիզ հասնի։

— Շատ սխալ տեղեկութիւն են տուել ձեզ. նախ որ՝ Սաթթար և Բաղըր խաները կալանաւորված չեն ոչ ռուսների և ոչ էլ կառավարութեան կողմից։ Նրանց Թէհրան է կանչել մէջլիսը և պատուաւոր կերպով ընդունել. մէջլիսը և անջումանները կան և գործում են շատ փառաւոր և Սուլթան-Ահմեդ շահը պետութիւնների կողմից հաստատված և ընդունված շահ է։

Այս դեռ Քիւրդստանի գիտակից դասակարգի հասկացողութիւնն է. էլ տեսէք ռամիկ ժողովուրդը ինչ կը լինի։ Խուրշիդ

Յ. Գ.—Այս րօպէիս լուր ստացվեց, որ Սօուջ-Բուլաղից եկող պօստը կողոպտել են՝ տանելով 12 հրացան, 3 ձի և 6000 թուման փող. պօստի հետ կար և երկու հայ, որոնք նոյնպէս ենթարկվել են կողոպուտի։ Նոյն

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթեւեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ մարդատար № 12 գնացքը՝ 2 ժ. 38 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 9 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 20 ր. գիշերվայ, Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 16 ր. գիշ., Բալաջարի՝ 8 ժ. 1 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժ. 48 ր. առաւ.։ Արագ № 2 գնացքը՝ 8 ժ. 15 ր. առաւ., Գանձակ է հասնում 1 ժ. 28 ր. ցեր., Եւլախ՝ 3 ժ. 6 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 7 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 8 ր. գիշ., Բագու՝ 10 ժ. 53 ր. գիշ.։ Պօստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 4 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 18 ր. գիշ., Եւլախ՝ 6 ժ. 26 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 23 ր. առաւ., Բալաջարի՝ 3 ժ. 13 ր. ցեր., Բագու՝ 4 ժ. 45 ր. ցեր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար № $^{74}/_{75}$ 12 ժ. 22 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 11 ժ. 21 ր. առ., Էջմիածին կայար.՝ 4 ժ. 49 ր. ցեր., Նախիջևան՝ 10 ժ. 51 ր. գիշ.. Ջուլֆա՝ 12 ժ. 29 ր. գիշ.։ Ապրանքատար-մարդատար՝ 4 ժ. 15 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 10 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 38 ր. առաւօտեան, Երևան՝ 10 ժ. 9 ր. առ.. և սրանից դէնը այլևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5՝ 7 ժ. 31 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 11 ժ. 45 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 30 ր. առաւ.։ Պօստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 5 ժ. 47 ր. երեկ., Բաթում՝ 3 ժ. 25 ր. գիշ.։ Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 39 ր. գիշ., Բաթում՝ 10 ժ. 49 ր. առաւօտեան։

ԲՈՐԺՈՄ՝ մարդատար № $^{7}/_{8}$ 8 ժ. 28 ր. առ., Միխայլօվօ է հասնում 12 ժ. 42 ր. ցեր., Բօրժոմ՝ 2 ժ. 3 ր. ցեր.։ Մարդատար № $^{9}/_{10}$ 3 ժ. 36 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 7 ժ. 56 ր. երեկ., Բօրժոմ՝ 9 ժ. 13 ր. գիշերվայ.

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցեր.։ Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ.։ Մարդատար № 11՝ 6 ժ. 58 ր. առ (այս գնացքը Բաթում չէ գնում)։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ արագ № 2 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւ.։ Պօստատար № 4՝ 9 ժ. 4 ր. երեկ.։ Մարդատար № 6՝ 11 ժ. 4 ր. առ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար № $^{72}/_{73}$՝ 6 ժ. 8 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 33 ր. երեկոյեան։

ԲՈՐԺՈՄԻՑ՝ մարդատար № $^{9}/_{10}$ 8 ժ. 8 ր. երեկ.։ Մարդատար № $^{7}/_{8}$ 6 ժ. 28 ր. առաւ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒԴԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. Ֆ. ԲՕՂԴԱՆՈՎԱ—9½—1 ժ., պլոմբներ և արհեստական ատամներ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՆԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. Ֆ. ԲՕՂԴԱՆՈՎԱ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—42

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կաչնիեվսկայա փ., № 6, «Վէտզել» հիւրանոցի մօտ։ (ե. հ. չ.) 955. 100—83

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնովսկայա փ. № 16.
Տելեֆօն № 40.
(ե. ու. կ.) 984. 100—81

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
Թիֆլիսից 40 և 50 վ. հեռաւորութեան վրա (երկաթուղ. և խճուղ. հաղորդակցութիւն)
ԳԻՒՂԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐ
Դուշէթի գաւառում—Մչադիժվարի՝ 1523 դես. հանդերձ կալուածատիրական շինութեամբ։ Գօրու գաւառում—Օկամի՝ 120 դես. և Շերտուլի՝ 208 դես.։ Բօրչալուի գաւառում—Ֆախրալօ՝ 812 դես. հանդերձ շինութեամբ, Սարկինէտի՝ 1000 դես., Ֆախրալօյեան անտառը՝ 1830 դես.—կաղնի, հաճարի և բոխի ծառերով։
Մանրամասնութիւնները և այլ տեղեկութիւնները ըստ պահանջման։
Հասցէագրել՝ С.-Петербургъ, Мойка 81. Кн. А. И. Багратіону-Мухранскому.
(ե. ու.) 465. 3—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԳԵՆՏ
Տեղական եւ օտար քաղաքների լրագիրների ու ամսագիրների համար։
Մ. Ա. ԳԱԺՕՆԻԱ
Ընդունվում են ձեռնտու պայմաններով ամեն տեսակ յայտարարութիւններ՝ ինչպէս տեղական, նոյնպէս եւ օտար քաղաքների լրագիրների ու ամսագիրների համար։ Իմ ծառայութիւնից օգտվել ցանկացողներին խնդրում եմ դիմել այս հասցէով. Тифлисъ, Великокняжеская, № 40.
Տելեֆօն № 216.
(ե.հ.չ.) 339. 15—11

Լոյս տեսաւ
„ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ"
պատկերազարդ ամսաթերթի № 3—4.
Բովանդակութիւն.
Երաժշտական բաժին.—Հայ գեղջուկի պարը, Կոմիտաս վարդապետի։—Հայկական երաժշտութիւն, Ի. Ե. Պօպօվի.—Ֆելիէտօն՝ Դպրոցական յիշողութիւններ.—Երաժշտութիւնը Բարցելօնի էսպերանտիստների V միջազգային կոնգրէսում.—Երգ-ձայնագրութիւն մեր դպրոցներում, Dissonans.—Բանւորական մեծ համերգը Բալախանիում, Կ. Մ.—Երաժշտական քրօնիկ։
Գրական բաժին.—Ոճրագործ ծովը, Հ. Մ.-ի.—Շուշանների հովտում, Ա. Ջանեանի։
Թատերական բաժին.—Իմ թատրօնական յիշողութիւններից, Գէորգ Չմշկեան.—Կոմիսսարժեվսկայայի յիշատակին, ուսան. Աննա Մայիլեանի.—Մեր անտարբերութիւնը, Կ. Թալանեանի.—«Ղարագեօզ», Կ. Զալաբի.—Թատրօն և երաժշտութիւնը արտասահմանում—Շանտրկլէր, Յ. Տ.-Գ.-ի.—Թատերական քրօնիկ.—Թղթակցութիւն.—Մեր պատկերները.—Պօստարկղ.—Ստացված հրատարակութիւններ.—Յայտարարութիւններ։
Ամսաթերթին աշխատակցում են մեր թատերական և երաժշտական ասպարէզի լաւագոյն ույժերը։
Տարեկան բաժանորդները ստանում են 6 ձրի յաւելուած, երաժշտական և թատերական երկեր։
Բաժանորդագինը Բագւում՝ տարեկան 2 ր., Բագւից դուրս՝ 2 ր. 50 կ., արտասահման՝ 3 ր. կամ 9 ֆր.։ Խմբագր. հասցէն. Баку, Гимназическ. ул., ред. „Татрон—Еражштутюн". А. С. Маиляну, կամ Bacou (Caucase) Rédaction du journal „Thatron—Erajestuthün", Anton Mailian, Gimnasit-cheskaya.
Նոր բաժանորդները կը ստանան լոյս տեսած № 1—2, Ա. Մայիլեանի «Մանկական երգերը» և Վ. Տ.-Աբր.-ի «Դրամատիկական պօէմը»։
Խմբագիր-հրատարակիչ՝ Ս. Մայիլեան
458. 1—1

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԽԱՂ
1910 թ. ընթացքում կը լինի 5 տիրաժ։
Իւրաքանչիւր տիրաժում տարած գլխաւոր գումարը 1.000,000. Մանրամասն տեղեկութ. ուղարկում է ձրի—БЕРНАРЪ и К-о, ПАРИЖЪ, Севастопольскій Бульв., 30. Գրել և հասցէագրել կարելի է ռուսերէն։ Արտասահմ. նամակներին կպցնել՝ բացիկին—4 կ., փակին—10 կ. մարկա։
(27,1,4,8) (В. 29209) 449. 4—1

№4870.
BESTE ALBERT SACHS SCHUH-CREAM
„BRISTOL"

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ
КОЛОССАЛЬНЫЙ
успѣхъ сапожн. крема
„БРИСТОЛЬ"
СОБЛАЗНЯЕТЪ поддѣлывателей.
ВНИМАНІЕ!
Настоящій только № 4870.
Альбертъ Заксъ
КОНТОРА: СПБ., Англ. пр. 46, телеф. 321—07.
РОЗН. МАГ.: Казанская 6, телеф. 264—92.
(П. 42934) 446. 10—2

ԱՅԳԻ-ՃԱՇԱՐԱՆ „ԻԺԱՆԷ" ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Վրաց ազնուականների թատրօնին կից
◆ Մուտքը աջ կողմից, գալլերէայի միջով։ ◆
ՃԱՇ և ԸՆԹՐԻՔ։ Ճաշը ցեր. ժամը 1-ից մինչև ժամը 5-ը։
Ճաշ.—2 տես. կերակուր—50 կ., 3 տես. կեր.—75 կ., 4 տես. կեր.—1 ր.։
ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ։
Ճաշարանին կից կան երեք հատ նորագոյն ԲԻԼԻԱՐԴ և ՆԱՐԴԻ։ Կան և առանձնասենեակներ։
ԱՅԳՈՒՄ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ պիկնիկների, ճաշերի և ընթրիքների համար՝ ամեն տեսակ քանակութեան, որոնց համար այգին ունի միանգամայն մեկուսացած ծածկված ռոտոնդա և բաց տարածութիւն մեծ ընկուզենիների տակ։
ԱՅԳՈՒ ՄՈՒՏՔԸ ՁՐԻ Է
(կ. ե.) 461. 10—2

Ներսիսեան Հայոց Հոգ. Դպրոցի Հոգաբարձութիւնը
սրանով յայտարարում է, որ ԷՔՍՏԵՐՆՆԵՐԻ (վերջնական) և որևէ դասարանի վկայական ստանալ ցանկացողների
◆ Քննութիւնները սկսվում են մայիսի 7-ից։ ◆
Քննվել ցանկացողները պարտաւոր են ներկայացնել խնդրի հետ իրանց ծննդեան վկայականը (իսկական), լուսանկարը և քննութեան համար սահմանված 5 րուբլի վարձը ապրիլի 27-ից սկսած մինչև մայիսի 5-ը։
(22,27,2) 453. 3—2

Լ. Լեալէի լաբօրատօրիայի Օրլեան քաղաքում (Ֆրանսիա)
ԵՕԴԻՐԻՆ ԲԺՇԿԱՊԵՏ ԴԵՇԱՆԻ
(Iodhyrine du d-r Deschamp)
ՇԱՏ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԻՋՈՑ
ՉԱՂԱՆԱԼՈՒ ԴԷՄ
որ խորհուրդ են տալիս բժիշկները, փառաւոր հետևանքներով։ Բժշկապետ Դէշանի Եօդիրինը նշանաւոր միջոց է համարվում չաղութեան դէմ. նրա աջող ներգործութիւնը նկատվում է հէնց բժշկութեան սկզբում։
Բժշկապետ Դէշանի Եօդիրինը բոլորովին անվնաս է օրգանիզմի համար։
Հեռացնում է չաղութիւնը աստիճանաբար շատ կարճ ժամանակամիջոցում։
Սրվակի գինը, որ պարունակում է 60 դեղահատեր, արժէ 4 ր. 25 կոպ.։
Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։
Ընդհանուր ներկայացուցչութիւնը Ռուսաստանում
Торговый Домъ ЛЮКСЕНБУРГЪ и К-о, Варшава, Журавья, 40.
(6,16,27,м.7,17) (В. 25331) 370. 5—3

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.